Թողարկման 20-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2013

Փետրվար
թիվ 2 (174)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Մոբի Դրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՓԲԸ «Կորյուն» մասնաճյուղը հաշվառումից հանելու, «Վիգեն-Վահագն եղբայրներ» և «Մինի Կրեդիտ» ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ին «Ինտելէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ-ին գրանցելու և լիցենզավորելու, «Կարեն Յարալյան» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Կոնվերս բանկ» ՓԲԸ «Աշտարակ», «Դավթաշեն» և «Ֆինքա» ՈՒՎԿ ՓԲԸ «Կոմիտաս» մասնաճյուղերը գրանցելու, ինչպես նաև որոշ կազմակերպությունների նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 308-Ն որոշումը «2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակ», «Ստեփան Աղաջանյանի ծննդյան 150-ամյակ», «Արա Բեքարյանի ծննդյան 100-ամյակ» և «Բենիամին Մարգարյանի ծննդյան 100-ամյակ» հուշադրամները շրջառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 366-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 371-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 372-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 373-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

52 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 375-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

54 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 376-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

63 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 377-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

76 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 13-Ն որոշումը «2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

82 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 16-Ն որոշումը «Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ը հաստատելու մասին

110 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 17-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 255-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

112 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 18-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 365-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

115 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Հաշվառումից հանվել է*** «Մոբի Դրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական ընկերության «Կորյուն» մասնաճյուղը (որոշում թիվ 24Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Վիգեն-Վահագն եղբայրներ» և «Մինի Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատան կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 26Ա, 38Ա):
- ***«Ինտելէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Առէկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 27Ա):
- ***Գրանցվել ու լիցենզավորվել է*** «Կրեդո Ֆինանս» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (որոշում թիվ 30Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Կարեն Յարալյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 39Ա):
- ***Գրանցվել են*** «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ «Աշտարակ», «Դավթաշեն» և «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Կոմիտաս» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/82Ա, 1/117Ա, 1/109Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 սահմանափակ պատասխանատվությամբ, 3 փակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 1250000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/76Ա-1/78Ա, 1/89Ա, 1/134Ա) և 2 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/113Ա, 1/114Ա):

«2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակ», «Ստեփան Աղաջանյանի ծննդյան 150-ամյակ», «Արա Բեքարյանի ծննդյան 100-ամյակ» և «Բենիամին Մարգարյանի ծննդյան 100-ամյակ» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2013 թվականի հունվարի 14-ից շրջանառության մեջ դնել «Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակ», «Ստեփան Աղաջանյանի ծննդյան 150-ամյակ», «Արա Բեքարյանի ծննդյան 100-ամյակ» և «Բենիամին Մարգարյանի ծննդյան 100-ամյակ» հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք հուշադրամների էսքիզների հետ մեկտեղ ներկայացված են հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2012 թ., N 308-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 308-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակ» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են դիմակներ, որոնք խորհրդանշում են թատրոնը: Դիմակներից ձախ հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2013»: Ներքևում՝ վարագույրի ֆոնին, անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», իսկ շրջագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունը:

Հուշադրամի դարձերեսին Վահրամ Փափազյանի դիմանկարն է: Ներքևի մասում «1888» և «1968» տարեթվերն են, աջ և ձախ կողմերում, վարագույրի ֆոնին՝ «ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ» մակագրությունը:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.02.2013 թ. (ՀՀԳՏ N4 (448)[1], 15.02.2013):

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900^0
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	1000 հատ

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

1.1. «Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2. «Ստեփան Աղաջանյանի ծննդյան 150-ամյակ» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Ստեփան Աղաջանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են դրվագ «Նկարչի քրոջ աղջիկը» նկարից և նույն դրվագի գծանկարը: Վերևի ձախ մասում հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2013», ներքևի մասում անվանական արժեքն է՝ «100 դրամ»: Վերևի և ներքևի եզրաշուրթով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Ստեփան Աղաջանյանի դիմանկարը, ներկապնակ և վրձիններ: Վերևի և ներքևի եզրաշուրթով «ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ 1863-1940» և «STEPAN AGHAJANIAN» մակագրություններն են:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	28,28 գ
Չափ	28,0x40,0 մմ
Դրամաշուրթը	հարթ
Որակը	լավացված
Տպաքանակը	500 հատ

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

2.1. «Ստեփան Աղաջանյանի ծննդյան 150-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3. «Արա Բեքարյանի ծննդյան 100-ամյակ» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Արա Բեքարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է դրվագ «Աշտարակ» կտավից: Վերևի ձախ մասում ՀՀ զինանշանն է և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2013»: Վերևի և ձախ եզրաշուրթերով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» մակագրությունն է: Ներքևի մասում անվանական արժեքն է՝ «100 դրամ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Արա Բեքարյանի դիմանկարը և «Քաջ Նազար» հեքիաթի նկարազարդումը: Ձախ և ներքևի եզրաշուրթերով «ԱՐԱ ԲԵՔԱՐՅԱՆ» և «Արա Բեքարյան 1913-1986» մակագրություններն են:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	28,28 գ
Չափ	28,0x40,0 մմ
Դրամաշուրթը	հարթ
Որակը	լավացված
Տպաքանակը	500 հատ

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

3.1.«Արա Բեքարյանի ծննդյան 100-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

4. «Բենիամին Մարգարյանի ծննդյան 100-ամյակ» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Բենիամին Մարգարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին տիեզերքի և գալակտիկաների ոճավորված պատկերներ են: Ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ» և թողարկման տարեթիվը՝ «2013», եզրագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունը:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Բենիամին Մարգարյանի դիմանկարը և նրա կողմից հայտնաբերված գալակտիկաները: Եզրագծով «ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ» և «BENJAMIN MARGARYAN 1913-1985» մակագրություններն են:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

4.1. «Բենիամին Մարգարյանի ծննդյան 100-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի կողմից արժեթղթերով իրականացվող գործարքների հետ կապված՝ հաճախորդների արժեթղթերը համապատասխան դեպո հաշիվներում հաշվառելու անհրաժեշտությունը,

նպատակ ունենալով հստակեցնել առևտրային բանկերի կողմից (որպես՝ ենթապահառու) հաճախորդների դեպո հաշիվների բացման կառուցվածքը և հաճախորդների արժեթղթերն ըստ համապատասխան կարգավիճակների դեպո հաշիվներում հաշվառման իրականացման գործընթացը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իգ[1]» կետերը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին», «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության», «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգերը հաստատելու մասին» թիվ 75-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 4-րդ կետով հաստատված «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման» հավելված 4-ում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կարգի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Ենթապահառուի մոտ վարվող դեպո հաշիվներն ունեն հետևյալ կառուցվածքը.

Հաշվի կառուցվածքը			
X1X2X3X4X5	X6	X7X8 X9 X10X11X12	X13
*	**	***	****

Որտեղ՝

** Ենթապահառուի կոդն է*

*** Հաշվի կարգավիճակը*

**** Տվյալ ենթապահառուի ներդրողի կոդը*

***** Ստուգիչ նիշը*

X6 Հաշվի կարգավիճակի մասնիկը կարող է ունենալ հետևյալ կոդերը՝	
4	ազատ
5	գրավով սահմանափակված
6	արգելադրված (կալանված)
7	առևտրի համար նախատեսված
8	գրավադրված արգելադրված (կալանված)

	Հաշվի կառուցվածքում **X7X8 X9X10X11X12 –** մասը տվյալ ենթապահառուի ներդրողի կոդն է, որը տրվում է ենթապահառուի կողմից, ընդ որում.
X7X8	մասնիկները ցույց են տալիս ներդրողի տեսակը. որտեղ՝

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.2013 թ. (ՀՀՊՏ N7 (451), 1.03.2013):

	X7 մասնիկը ցույց է տալիս ներդրողի կարգավիճակը, որի կոդը կարող է լինել.
1	ռեզիդենտ ներդրողներ,
2	ոչ ռեզիդենտ ներդրողներ,

	X8 մասնիկը ցույց է տալիս ներդրողի խումբն ըստ պատկանելության, որի կոդը կարող է լինել.
1	բանկային հաստատություններ,
2	արժեթղթերի շուկայի մասնակիցներ (բրոքերային գրասենյակ և այլն),
3	ֆինանսավարկային կազմակերպություններ (ոչ բանկային հաստատություններ),
4	այլ իրավաբանական անձ,
5	այլ ֆիզիկական անձ:

	Ներդրողների կոդի կառուցվածքում **X9X10X11X12-**մասնիկները տրվում են ենթապահառուի կողմից: **X7X8-**մասնիկների համար սահմանված կոդերը, ըստ սահմանված սկզբունքի, նույնպես տրվում են ենթապահառուի կողմից: Յուրաքանչյուր ենթապահառու ինքն է որոշում իր ներդրողների կոդերի կառուցվածքը՝ հաշվի առնելով, որ ներդրողի կոդը չի կարող հավասար լինել «000000», որն արտացոլում է ենթապահառուին պատկանող սեփական պարտատոմսերը:
	X13- ստուգիչ նիշն է, որը հաշվարկվում է համաձայն սույն կարգով սահմանված սկզբունքի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2012 թ., N 366-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով

օպտիմալացնել ղեկավարների գրանցումը՝ գործընթացների պարզեցման և պահանջվող տեղեկատվության կրճատման միջոցով,

ապահովել ֆինանսական համակարգում տեղաշարժման ճկունությունը՝ արդեն իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված և օրենքով սահմանված մերժման հիմքեր չունեցող ղեկավարների կողմից այլ պաշտոն զբաղեցնելու դեպքում գրանցման որոշ գործընթացներից ազատելու միջոցով,

ապահովել միջազգային ճանաչում ունեցող կազմակերպություններում աշխատանքային փորձ ունեցող և մի շարք ուսումնական կենտրոնների կողմից որակավորում կամ դիպլոմ ստացած ղեկավարների գրանցումը՝ առանց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացված որակավորման վկայականի,

հնարավորինս միասնականացնել տարբեր ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման գործընթացները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.
   1) Կանոնակարգ 1-ի 27-րդ կետը լրացնել «ը» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
      «ը) միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի ենթահավելվածի 38-ի:»,
   2) Կանոնակարգ 1-ը լրացնել 28.9 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
      «28.9. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի ենթահավելվածի 38-ի:»,
   3) Կանոնակարգ 1-ի 52-րդ կետը «նիստում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն կանոնակարգի 71.12 կետով նախատեսված դեպքերի» բառերով,
   4) Կանոնակարգ 1-ի 53-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
      «1) Հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 1 օր առաջ Կենտրոնական բանկը տեղեկացնում է թեկնածուին հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:»,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.2013 թ. (ՀՀԳՏ N7 (451), 1.03.2013):

5) Կանոնակարգ 1-ի գլուխ 10.2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 10.2. ԲԱՆԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

54. Բանկի այն մասնաճյուղերի ղեկավարները (կառավարիչ և գլխավոր հաշվապահ), որոնք, համաձայն իրենց կանոնադրության, իրականացնելու են միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի «ե» և «ժ» ենթակետերով նախատեսված ֆինանսական գործառնությունները, պետք է ունենան, համապատասխանաբար, բանկի մասնաճյուղի կառավարչի և բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական:

55. Սույն կանոնակարգի 54-րդ կետում սահմանված որակավորման ստուգումը և որակավորման վկայականի տրամադրումն իրականացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի 10.3 գլխի:

55.1. Սույն կանոնակարգի 54-րդ կետով սահմանված որակավորման վկայականի պահանջը պարտադիր չէ այն ղեկավարների համար, որոնք ունեն էյ-Սի-Սի-էյ (ACCA) F1-F5 մակարդակների որակավորում:»:

6) Կանոնակարգ 1-ի 56-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «բացառությամբ սույն կանոնակարգի 54-րդ կետով նշված մասնաճյուղի կառավարչի և» բառերը:

7) Կանոնակարգ 1-ի 56-րդ կետի 5-րդ ենթակետից հանել «բացառությամբ սույն կանոնակարգի 54-րդ կետով նշված մասնաճյուղի կառավարչի և» բառերը:

8) Կանոնակարգ 1-ը լրացնել 56.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«56.1. Սույն կանոնակարգի 56-րդ կետից կարող են սահմանվել բացառություններ, համաձայն սույն կանոնակարգի 71.10-71.11 կետերի»:

9) Կանոնակարգ 1-ի գլուխ 11-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 11. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

71. Բանկի ղեկավարների գրանցումն իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ և բարդ: Գրանցվող ղեկավարների գրանցման ընթացակարգերը, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է սույն կանոնակարգի Ենթահավելված 3ա-ով:

1) Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

ա. թեկնածուի որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով՝ համաձայն սույն կանոնակարգի 10-րդ, 10.1, 10.2, 10.3 գլուխների, բացառությամբ սույն կանոնակարգի 71.10-71.11 կետերով սահմանված դեպքերի,

բ. թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության, ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,

գ. թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 71.12 կետով սահմանված դեպքերի:

2) Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

ա. թեկնածուի որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով՝ համաձայն սույն կանոնակարգի 10-րդ, 10.1, 10.2, 10.3 գլուխների, բացառությամբ սույն կանոնակարգի 71.10-71.11 կետերով սահմանված դեպքերի,

բ. թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

71.1. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար՝

ա. անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին բանկի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Ենթահավելված 4-ի,

բ. իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

2) Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար բանկը պետք է Կենտրոնական բանկ ներկայացնի անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին բանկի միջնորդագիրը՝ համաձայն Ենթահավելված 4-ի:

71.2. Սույն կանոնակարգի ենթահավելված 4-ով սահմանված միջնորդագրի 2.6, 2.8-2.10, 3.3 ենթակետերում, ինչպես նաև սույն կանոնակարգի 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխությունները բանկին հայտնի դառնալուց հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում: Սույն կանոնակարգի ենթահավելված 4-ով սահմանված միջնորդագիրը (տեղեկանքը) և սույն կանոնակարգի 71.1 կետով սահմանված իրավասու մարմնի որոշման սքան արված տարբերակը բանկի կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Սույն կանոնակարգի ենթահավելված 4-ով սահմանված միջնորդագիրը ներկայացվում է էքսել (excel) ֆայլով՝ հաստատված բանկի գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, նշված միջնորդագրով (տեղեկանքով) ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը:

71.3. Բանկերը և օտարերկրյա բանկի մասնաճյուղերը պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն բանկի իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

71.4. Բանկի ղեկավարի կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ղեկավարները (բացառությամբ բանկի խորհրդի նախագահի և անդամների) պետք է ունենան Կենտրոնական բանկի կողմից տրված որակավորման վկայական, բացառությամբ սույն կանոնակարգի 71.10-71.11 կետերով սահմանված դեպքերի: Ընդ որում, որակավորման վկայականի առկայության պահանջը պարտադիր չէ բանկի այն մասնաճյուղերի ղեկավարների գրանցման համար, որոնց մասով Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման եզրակացության համաձայն բավարարված են սույն կանոնակարգի 21.1 կետով սահմանված պահանջները: Սույն կետում նշված մասնաճյուղի ղեկավարների որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 66-րդ կետում նշված կարգով և ժամկետներում:

71.5. Կենտրոնական բանկը պարտավոր է սույն գլխում սահմանված՝ ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների գրանցման համար համապատասխան գլուխներով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից հետո օրենքով սահմանված ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ: Պարզ ընթացակարգերով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի համապատասխան որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 71.7-71.9 կետերի ուսումնասիրության արդյունքում, Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ բանավոր կամ գրավոր ծանուցման միջոցով, չի պահանջում անձին գրանցել բարդ ընթացակարգով: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 80-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: Եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 71.7-71.9 կետի համաձայն պահանջում է պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարի թեկնածուին գրանցել բարդ ընթացակարգով, ապա Կենտրոնական բանկը այդ մասին ծանուցում է բանկին, իսկ բանկը պարտավոր է ծանուցման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում ղեկավարի թեկնածուին ներկայացնել բարդ ընթացակարգով գրանցման: Նշված դեպքում պահպանվում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

71.6. Սույն կանոնակարգի 71.5 կետում նշված ծանուցումը ստանալուց հետո բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը ղեկավարին (ղեկավարներին) ներկայացնում է բարդ ընթացակարգով գրանցման այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել բանկին կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղին ղեկավարին (ղեկավարներին) պարզ ընթացակարգով գրանցման ներկայացնելու հնարավորության մասին:

71.7. Եթե բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ բանկում կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղում, Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները, կամ սույն կանոնակարգի 71.3 կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

71.8. Եթե բանկի մասնաճյուղը, Կենտրոնական բանկի կարծիքով, հանդիսանում է բանկի գործունեության վրա էական ազդեցություն ունեցող, ապա տվյալ մասնաճյուղի բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

71.9. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և/կամ այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր բանկի և/կամ ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

71.10.Բանկի ղեկավարների թեկնածուները համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող, եթե ունեն իրենց պաշտոնի համար սույն կետով սահմանված հետևյալ որակավորումներից, դիպլոմներից կամ հավաստագրերից որևէ մեկը.

1) բանկի գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ, տնօրենության (վարչության) անդամ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ, բանկի մասնաճյուղի կառավարիչ՝ Սի-էֆ-էյ (CFA) կամ էֆ-Առ-էմ (FRM) կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-Այ (CII) որակավորման դիպլոմ,
2) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները, բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ,
3) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում, ներքին աուդիտի անդամ՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում,
4) Բանկի ներքին դիտարկումների աշխատակից՝ Համապատասխանության միջազգային ասոցիացիայի կողմից տրամադրված համապատասխանության դիպլոմ կամ հավաստագիր, որոնք տրամադրվել են վերջին երեք տարվա ընթացքում:

71.11. Բանկի ղեկավարների այն թեկնածուները, որոնք աշխատել են Ենթահավելված 4բ-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և զբաղեցրել են նմանատիպ պաշտոններ և/կամ ստանձնել են համանման պարտականություններ, համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող:

71.12. Բանկի ղեկավարներին սույն կանոնակարգի 71-րդ կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս՝ ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

71.13. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Ենթահավելված 4-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը դիմում է Կենտրոնական բանկ՝ նույն անձին ղեկավար գրանցելու միջնորդությամբ, ապա Ենթահավելված 4-ով սահմանված միջնորդագիրը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն միջնորդագրի 1-ին կետի բոլոր դաշտերը, 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է: Բանկը նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ

տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

71.14. Բանկի խորհրդի նախագահի և խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 53-րդ կետի 3-րդ ենթակետում նշված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկն անհրաժեշտ չի համարում հարցազրույցի անցկացումը, որի դեպքում խորհրդի նախագահը և անդամները գրանցվում են առանց հարցազրույցի հրավիրվելու:

72. Որպես որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշ սահմանվում է, որ գրանցման պահին բանկի ղեկավարը պետք է իրազեկ լինի ֆինանսական համակարգի, մասնավորապես, բանկերի գործունեությունը կարգավորող օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև բանկի (կամ բանկի մասնաճյուղի) տնտեսական ծրագրին և բանկի գործունեությունը կարգավորորող ներքին ակտերին: Բացի այդ.

1) Բանկի խորհրդի նախագահը, բանկի խորհրդի անդամները պետք է ունենան.

ա. բարձրագույն կրթության առկայության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատությունը ավարտած լինելու կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական ստացած լինելու դեպքում՝ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,

բ. բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայականի բացակայության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած չլինելու դեպքում՝ 10 տարվա աշխատանքային փորձ:

2) Բանկի գործադիր տնօրենը (վարչության նախագահը), բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալը, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչը, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի տեղակալը, տնօրենության (վարչության) անդամները պետք է ունենան բարձրագույն կրթություն կամ ավարտած լինեն օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն, կամ ունենան Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 2 տարին՝ ղեկավար պաշտոնում:

3) Բանկի ներքին աուդիտի ղեկավարը, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարը պետք է ունենան բարձրագույն կրթություն կամ ավարտած լինեն օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ունենան Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

4) Բանկի ներքին աուդիտի անդամները, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամները պետք է ունենան բարձրագույն կրթություն կամ ավարտած լինեն օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ունենան Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

5) Բանկի գլխավոր հաշվապահը, գլխավոր հաշվապահի տեղակալը, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահը, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալը պետք է ունենան բարձրագույն կրթություն կամ ավարտած լինեն օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ունենան Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

6) Բանկի մասնաճյուղի կառավարիչը և գլխավոր հաշվապահը պետք է ունենան.

ա. բարձրագույն կրթության առկայության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած լինելու կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական ստացած լինելու դեպքում՝ առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ,

բ. բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայականի բացակա-

յության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած չլինելու դեպքում՝ 2 տարվա աշխատանքային փորձ:

7) Բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը պետք է ունենա.

ա. բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական,

բ. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ (ֆինանսական ոլորտում կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում):

72.1. Սույն կանոնակարգի 72-րդ կետում նշված աշխատանքային փորձը վերաբերում է գրանցման պահին նախորդող 10 տարիներին, բացառությամբ բարձրագույն կրթության կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայականի բացակայության, կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած չլինելու համար նախատեսված աշխատանքային փորձի:

72.2. Եթե ղեկավարի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 72-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային փորձ և/կամ բարձրագույն կրթություն, ապա նա իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնելու համապատասխան պաշտոններում աշխատելու համար իր մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և/կամ այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և/կամ այլ հիմնավորումների հիման վրա հանձնաժողովի դրական եզրակացությամբ Կենտրոնական բանկի նախագահն իրավունք ունի գրանցելու անձին համապատասխան պաշտոնում, եթե գտնում է, որ անձի մոտ առկա են այդ պաշտոնում աշխատելու համար բավարար գիտելիքներ ու հմտություններ:

73. Անձին՝ որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ, եթե ղեկավարի թեկնածուները.

1) ունեն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն,
2) դատարանի կողմից զրկված են ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
3) սնանկ են ճանաչվել և ունեն չմարված (չներված) պարտավորություններ,
4) Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114Ն որոշմամբ հաստատված «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու ուղեցույցի» համաձայն չեն կարող զբաղեցնել այդ պաշտոնը:
5) քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,
6) ունեն բացասական գործարար համբավ բանկային համակարգում,
7) չեն համապատասխանում սույն կանոնակարգի 72-րդ կետով սահմանված չափանիշին,
8) եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ են և չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
9) փոխկապակցված են տվյալ բանկի ղեկավարների հետ (միայն ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների թեկնածուների համար):

73.1. Անձին՝ որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի կողմից, եթե սույն կանոնակարգի 71.5 կետով սահմանված ծանուցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում բանկը ղեկավարի թեկնածուին չի ներկայացնում բարդ ընթացակարգով գրանցման:

74. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ բանկի ղեկավարը հանվում է գրանցումից, եթե.

1) որակավորման վկայականի գործունեության ժամկետը լրացել է, և ղեկավարը չի ստացել որակավորման նոր վկայական,
2) ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, այդ թվում՝ սույն կանոնակարգի 72-րդ կետի 7-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված դիպլոմից (հավաստագրից) կամ որակավորումից,
3) բանկը դիմել է համապատասխան միջնորդությամբ,
4) ի հայտ են եկել «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված դեպքերը:

75. Բանկի միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար բանկերը պարտավոր են փոփոխություններ կատարելու վերաբերյալ բանկի իրավասու մարմնի կողմից որոշում ընդունելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ բանկի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

76. Եթե բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավար:

76.1. Բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոնում նշանակված անձին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու դեպքում բանկը պարտավոր է նշանակել ժամանակավոր պաշտոնակատար և, սույն կետում նախատեսված փաստաթղթերից բացի, այդ մասին բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցին Կենտրոնական բանկում գրանցումից հանելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում ներկայացնել Կենտրոնական բանկ:

77. Սույն կանոնակարգի իմաստով բանկի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար են համարվում այն անձինք, որոնք առանց համապատասխան պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում են բանկի ղեկավարի պարտականություններ:

78. Բանկի գործադիր տնօրենի, վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող են նշանակվել (նշված պարտականությունները կարող են կատարել) միայն տվյալ բանկի գործադիր տնօրենի տեղակալը, վարչության նախագահի տեղակալը, վարչության (տնօրենության) անդամը:

79. Բանկի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող է կատարել) տվյալ բանկի գլխավոր հաշվապահի տեղակալը, կամ գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող բանկի այլ աշխատակիցը:

80. Ղեկավար պաշտոններում առանց որակավորման վկայականի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետ կարող է սահմանվել ոչ ավելի, քան 3 ամիս: Բացառություն են կազմում բանկի գործադիր տնօրենի, վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատարները, որոնք առանց որակավորման վկայականի չեն կարող պաշտոնավարել: Որակավորման վկայական ունեցող, սակայն Կենտրոնական բանկի կողմից չգրանցված անձինք կարող են աշխատել որպես ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավելի, քան 3 ամիս: Բացառություն են կազմում բանկի գործադիր տնօրենի, վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատարները, որոնք առանց Կենտրոնական բանկում գրանցվելու չեն կարող պաշտոնավարել:

81. Նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնին նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետ:

82. Նշված եռամսյա ժամկետում բանկի կողմից նշանակված որակավորման վկայական չունեցող բանկի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պետք է սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկում անցնի որակավորման և մասնագիտական համապատասխանության քննություն և գրանցվի Կենտրոնական բանկում, իսկ որակավորման վկայական ունեցողը՝ գրանցվի Կենտրոնական բանկում:

82.1. Բանկի խորհրդի քանակական կազմը բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված թվից պակաս լինելու դեպքում բանկը Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում թափուր մնացած տեղերի համար խորհրդի անդամի նոր թեկնածուներին՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով: Բանկի խորհրդի նախագահի և անդամների թեկնածուներն իրավունք ունեն իրականացնել համապատասխանաբար խորհրդի նախագահի և խորհրդի

անդամի պարտականությունները միայն Կենտրոնական բանկում համապատասխան պաշտոնում գրանցման պահից: Բանկի խորհրդի նախագահի և խորհրդի անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:»:

10) Կանոնակարգ 1-ը լրացնել Ենթահավելված 3ա-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

11) Կանոնակարգ 1-ը լրացնել Ենթահավելված 4բ-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

12) Կանոնակարգ 1-ի Ենթահավելված 4-ում.

ա. 1-ին կետի 1.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ՝

- o բանկ
- o օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- o վարկային կազմակերպություն
- o ապահովագրական ընկերություն
- o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ
- o ապահովագրական բրոքեր
- o ներդրումային ընկերություն
- o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ
- o կարգավորվող շուկայի օպերատոր
- o Կենտրոնական դեպոզիտարիա
- o ֆոնդի կառավարիչ
- o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ
- o բյուրո
- o վճարահաշվարկային կազմակերպություն
- o դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն»,

բ. 2-րդ կետի 2.6 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)»,

գ. 2-րդ կետի 2.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.7 Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը) (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)»,

դ. 3-րդ կետի 3.2 ենթակետը ճանաչել ուժը կորցրած,

ե. 3-րդ կետը լրացնել 3.5 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.5. Նշեք նշված պաշտոնում Ձեր պաշտոնավարման սկիզբը, ըստ իրավասու կառավարման մարմնի որոշման՝

(օր/ամիս/տարի)»,

զ. 4-րդ կետի 4.3 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից).

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը

»,

է. 4-րդ կետի 4.4 ենթակետը «վերջին աշխատատեղից» բառերից հետո լրացնել «(ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք)» բառերով,

ը. 5-րդ կետի 5.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:

○ Ոչ,

○ Այո, ներկայացնել մանրամասներ»,

թ. 5-րդ կետի 5.9 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում.

○ Ոչ,

○ Այո, ներկայացնել մանրամասներ:»,

ժ. 6-րդ կետի 6.3 ենթակետում «Սույն կանոնակարգի իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները» բառերը փոխարինել «Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:» բառերով,

ժա. 8-րդ կետի 8.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

»,

ժբ. 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

ժգ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*12. Հավաստիացնում եմ, որ.*

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը,

գ. վերոնշված անձը համապատասխանում է համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրություն

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի անուն, ազգանուն ----------

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) ----------

Ստորագրություն ----------

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն ----------»:

13) Կանոնակարգ 1-ի Ենթահավելված 29-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է):

14) Կանոնակարգ 1-ը լրացնել Ենթահավելված 38-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

28 դեկտեմբերի 2012 թ., N 371-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 371-Ն որոշմամբ

Ենթահավելված 3ա
«Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 1-ի

Ղեկավարների գրանցման ընթացակարգը

Թիվ	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգ
1	Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավար, այդ թվում՝	
1.	Խորհրդի նախագահ	Բ
2.	Խորհրդի անդամներ	Բ
3.	Խորհրդի նախագահի տեղակալ	Բ
4.	Գործադիր տնօրեն	Բ
5.	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
6.	Տնօրենության (վարչության) նախագահ	Բ
7.	Տնօրենության (վարչության) նախագահի տեղակալ	Բ
8.	Տնօրենության անդամ	Բ
9.	Գլխավոր հաշվապահ	Բ
10.	Գլխավոր հաշվապահի տեղակալ	Բ
11.	Ներքին աուդիտի ղեկավար	Բ
12.	Ներքին աուդիտի անդամներ	Պ
13.	Մասնաճյուղի կառավարիչ	Պ
14.	Մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	Պ
15.	Ներքին դիտարկումների մարմին	Պ

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 371-Ն որոշմամբ

Ենթահավելված 4բ
«Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 1-ի

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկ

1. Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank)
2. Միջազգային հաշվարկների բանկ (Bank of International Settlements)
3. Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Black Sea Trade and Development Bank)
4. Կարիբյան զարգացման բանկ (Caribbean Development Bank)
5. Կենտրոնական Ամերիկայի տնտեսական ինտեգրման բանկ (Central American Bank of Economic Integration)
6. Լատինական Ամերիկայի զարգացման բանկ (Corporation Andina de Fomento)
7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (European Bank for Reconstruction and Development)
8. Եվրոպական հանձնաժողով (European Commission)
9. Եվրոպական ներդրումային բանկ (European Investment Bank)
10. Ներամերիկյան զարգացման բանկ (Inter-American Development Bank)
11. Միջազգային արժութային հիմնադրամ (International Monetary Fund)
12. Իսլամական զարգացման բանկ (Islamic Development Bank)
13. Սկանդինավյան զարգացման հիմնադրամ (Nordic Development Fund)
14. Սկանդինավյան ներդրումային բանկ (Nordic Investment Bank)
15. Նավթ արտահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ (OPEC Fund for International Development)
16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Co-operation and Development)
17. Նավթանյութեր արտահանող երկրների կազմակերպություն (Organization of Petroleum-Exporting Countries)
18. Համաշխարհային բանկի խումբ (World Bank Group)

1) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (International Bank for Reconstruction and Development)
2) Միջազգային զարգացման ասոցիացիա (International Development Association)
3) Միջազգային ֆինանսական կորպորացիա (International Finance Corporation)
4) Բազմազգ ներդրումների երաշխավորման գործակալություն (Multinational Investment Guarantee Agency)
5) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (International Centre for Settlement of Investment Disputes)

19. Վերակառուցման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau (KfW))
20. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների ֆինանսական կազմակերպություններ

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 371-Ն որոշմամբ

Ենթահավելված 29
«Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 1-ի

Բանկի կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/ _____թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է

_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)

որոշմամբ

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 371-Ն որոշմամբ

Ենթահավելված 38
«Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի Հավելված 1-ի

Միջնորդագիր
Ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ

Խնդրում ենք սույն միջնորդագրում նշված անձին գրանցել որպես ղեկավար և կից ներկայացնում ենք նրա վերաբերյալ տեղեկությունները:

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
☐ *Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները*
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ներկայացուցչության ղեկավար Դուք պետք է հանդիսանաք)*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ o բանկ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o ներդրումային ընկերություն o վճարահաշվարկային կազմակերպություն o դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն
2. Անձնական տվյալներ
2.1. Անուն, ազգանուն, հայրանուն
2.2. Սեռ՝ o արական o իգական
2.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
2.4. Ծննդավայր
2.5. Քաղաքացիություն
2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)
2.7. Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարանիշը), (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
2.8. Բնակության վայրը (մշտական և տվյալ պահին)
2.9. Հեռախոսահամար
2.10. էլեկտրոնային փոստի հասցե

2.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը,

Անուն, ազգանուն, հայրանուն

Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

3. Ղեկավար պաշտոն

3.1. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար.

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Սովորելու ժամանակաշրջանը (--թ-ից մինչև --թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակեր-պության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտակա-նությունները	Ազատման հիմքերը

Նշել միջանկյալ չաշխատած ժամանակահատվածներում ինչով եք զբաղվել

Չաշխատած ժամանակահատված	Նկարագրություն

5. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից
լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով

օպտիմալացնել ղեկավարների գրանցումը՝ գործընթացների պարզեցման և պահանջվող տեղեկատվության կրճատման միջոցով,

ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների ֆինանսական համակարգում տեղաշարժման ճկունությունը՝ արդեն իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված և օրենքով սահմանված մերժման հիմքեր չունեցող ղեկավարների կողմից այլ պաշտոն զբաղեցնելու դեպքում գրանցման որոշ գործընթացներից ազատելու միջոցով,

ապահովել միջազգային ճանաչում ունեցող կազմակերպություններում աշխատանքային փորձ ունեցող և մի շարք ուսումնական կենտրոնների կողմից որակավորում կամ դիպլոմ ստացած ղեկավարների գրանցումը՝ առանց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացված որակավորման վկայականի,

հնարավորինս միասնականացնել տարբեր ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման գործընթացները,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ, 51-րդ, 90-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ նաև՝ Կանոնակարգ 3/01) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/01-ի 35-րդ կետը լրացնել նոր 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:»:

2) Կանոնակարգ 3/01-ը լրացնել 35.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«35.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում օտարերկրյա ապահովագրական ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:»:

3) Կանոնակարգ 3/01-ի 38-րդ կետը լրացնել նոր 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:»:

4) Կանոնակարգ 3/01-ը լրացնել 38.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«38.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:»:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.2013 թ. (ՀՀՊՏ N7 (451), 1.03.2013):

5) Կանոնակարգ 3/01-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետը «նմուշները,» բառից հետո լրացնել «կամ միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի,» բառերով:
6) Կանոնակարգ 3/01-ը լրացնել 40.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«40.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:»:

7) Կանոնակարգ 3/01-ի 126.7 կետում «164-րդ կետով» բառերը փոխարինել «165.3 կետով» բառերով:
8) Կանոնակարգ 3/01-ի 126.8 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«126.8. Կենտրոնական բանկն ապահովագրական ընկերության խորհրդի նախագահի, խորհրդի անդամների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման համար հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 1 օր առաջ թեկնածուին տեղեկացնում է հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:»:
9) Կանոնակարգ 3/01-ի գլուխը 37-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 37. ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

164. Սույն կանոնակարգի իմաստով ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ղեկավարներն են՝ խորհրդի նախագահը և անդամները, գործադիր տնօրենը, տնօրենության ղեկավարը և անդամները, վարչության նախագահը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, պատասխանատու ակտուարը, մասնաճյուղի տնօրենը, մասնաճյուղի գլխավոր հաշվապահը, իսկ ապահովագրական բրոքերային ընկերության գրանցվող պատասխանատու անձինք են՝ գործադիր տնօրենը կամ վարչության նախագահը, վարչության անդամները, գլխավոր հաշվապահը, գործադիր տնօրենի տեղակալը:

165. Ղեկավարների գրանցումը իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ և բարդ: Գրանցվող ղեկավարների գրանցման ընթացակարգերը, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 3ա-ով:

165.1. Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով, համաձայն սույն կանոնակարգի 28-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ 34-րդ, 35-րդ, 36-րդ և 38-րդ գլուխների, բացառությամբ սույն կանոնակարգի 166.5, 166.6 կետերով սահմանված դեպքերի,
2) թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության, ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
3) թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով, բացառությամբ սույն կանոնակարգի 166.4 կետով սահմանված դեպքերի:

165.2 Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

1) թեկնածուի որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով, համաձայն սույն կանոնակարգի 28-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ և 38-րդ գլուխների, բացառությամբ սույն կանոնակարգի 166.5 և 166.6 կետերով սահմանված դեպքերի,
2) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

165.3. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերությունը Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար.

ա. անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

բ. իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

2) Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար Ընկերությունը պետք է Կենտրոնական բանկ ներկայացնի անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի:

165.4. Սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջնորդագրի 2.6, 2.8, 2.9, 3.3 ենթակետերում, ինչպես նաև 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխությունները Ընկերությանը հայտնի դառնալուց հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում: Սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջնորդագիրը և սույն կանոնակարգի 165.3 կետով սահմանված իրավասու մարմնի որոշման սքան արված տարբերակը Ընկերության կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջնորդագիրը ներկայացվում է էքսել (excel) ֆայլով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, նշված միջնորդագրով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը:

165.5. Ապահովագրական ընկերությունները, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերը, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերությունները պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

165.6. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերի, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ղեկավարները (բացառությամբ խորհրդի նախագահի և անդամների) պետք է ունենան Կենտրոնական բանկի կողմից տրամադրված որակավորման վկայական, բացառությամբ սույն կանոնակարգի 166.5, 166.6 կետերով սահմանված դեպքերի:

166. Կենտրոնական բանկը պարտավոր է սույն գլխում սահմանված՝ ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների գրանցման համար համապատասխան գլուխներով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից հետո՝ օրենքով սահմանված ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ: Պարզ ընթացակարգերով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի նախագահի որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 166.2-166.4 կետերի ուսումնասիրության արդյունքում, Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ բանավոր կամ գրավոր ծանուցման միջոցով, չի պահանջում անձին գրանցել բարդ ընթացակարգով: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 175-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: Եթե

Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 166.2-166.4 կետերի համաձայն պահանջում է պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարի թեկնածուին գրանցել բարդ ընթացակարգով, ապա Կենտրոնական բանկը այդ մասին ծանուցում է Ընկերությանը, իսկ Ընկերությունը պարտավոր է ծանուցման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում ղեկավարի թեկնածուին ներկայացնել բարդ ընթացակարգով գրանցման: Նշված դեպքում պահպանվում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

166.1. Սույն կանոնակարգի 166-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո ապահովագրական ընկերությունը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը ղեկավարին (ղեկավարներին) ներկայացնում է բարդ ընթացակարգով գրանցման այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել ապահովագրական ընկերությանը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղին ղեկավարին (ղեկավարներին) պարզ ընթացակարգով գրանցման ներկայացնելու հնարավորության մասին:

166.2. Եթե ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ Ընկերության մոտ Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները, կամ սույն կանոնակարգի 165.5 կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում Ընկերության բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

166.3. Եթե Ընկերության մասնաճյուղը, Կենտրոնական բանկի կարծիքով, հանդիսանում է Ընկերության գործունեության վրա էական ազդեցություն ունեցող, ապա տվյալ մասնաճյուղի բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

166.4. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և (կամ) այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր Ընկերության և (կամ) ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

166.5. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների թեկնածուները համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող, եթե ունեն իրենց պաշտոնի համար սույն կետով սահմանված հետևյալ որակավորումներից, դիպլոմներից կամ հավաստագրերից որևէ մեկը.

1) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ, տնօրինության (վարչության) անդամ, օտարերկրյա ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի կառավարիչ, ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն՝ Սի-էֆ-էյ (CFA) կամ էֆ-Առ-էմ (FRM) կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-Այ (CII) որակավորման դիպլոմ,
2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները, ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ,
3) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերության ներքին աուդիտի ղեկավար՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում, ներքին աուդիտի անդամ՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում:

166.6. Սույն կանոնակարգի 164-րդ կետով սահմանված ղեկավարների այն թեկնածուները, որոնք աշխատել են սույն կանոնակարգի Հավելված 3բ-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և ստանձնել են համանման պարտականություններ և/կամ նմանատիպ պաշտոններ, համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող:

166.7. Սույն կանոնակարգի 164-րդ կետով սահմանված ղեկավարներին սույն կանոնակարգի 165.1 կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

167. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Հավելված 3-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում Ընկերությունը դիմում է Կենտրոնական բանկ նույն անձին այլ ղեկավար պաշտոնում գրանցելու միջնորդությամբ, ապա սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջնորդագիրը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն միջնորդագրի 1-ին կետի բոլոր դաշտերը, 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է: Ընկերությունը նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

167.1. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի և խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 122-րդ կետում նշված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկն անհրաժեշտ չի համարում հարցազրույցի անցկացումը, որի դեպքում խորհրդի նախագահը և անդամները գրանցվում են առանց հարցազրույցի հրավիրվելու:

168. Եթե ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերի ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ապահովագրական ընկերության (ապահովագրական բրոքերի) ղեկավար:

168.1.Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե

1) անձը չի համապատասխանում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի կամ 90-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին,
2) ղեկավարի թեկնածուն չի համապատասխանում սույն կանոնակարգի 38-րդ գլխով սահմանված չափանիշներից առնվազն մեկին,
3) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

168.2. Անձին, որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի կողմից, եթե սույն կանոնակարգի 166-րդ կետով սահմանված ծանուցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում Ընկերությունը ղեկավարի թեկնածուին չի ներկայացնում բարդ ընթացակարգով գրանցման:»:

10) Կանոնակարգ 3/01-ը լրացնել Հավելված 3ա-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:
11) Կանոնակարգ 3/01-ը լրացնել Հավելված 3բ-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:
12) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 3-ում.

ա. 1-ին կետի 1.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ.

- o բանկ
- o օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- o վարկային կազմակերպություն
- o ապահովագրական ընկերություն
- o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ
- o ապահովագրական բրոքեր
- o ներդրումային ընկերություն
- o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ
- o կարգավորվող շուկայի օպերատոր
- o Կենտրոնական դեպոզիտարիա
- o ֆոնդի կառավարիչ

- o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ
- o բյուրո
- o վճարահաշվարկային կազմակերպություն
- o դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն»,

բ. 2-րդ կետի 2.6 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)»,

գ. 2-րդ կետի 2.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.7. Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը) (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)ե,

դ. 3-րդ կետի 3.2 ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

ե. 3-րդ կետը լրացնել 3.5 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.5. Նշեք նշված պաշտոնում Ձեր պաշտոնավարման սկիզբը, ըստ իրավասու կառավարման մարմնի որոշման՝

(օր/ամիս/տարի)»,

զ. 4-րդ կետի 4.3 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից).

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը

»,

է. 4-րդ կետի 4.4 ենթակետը «վերջին աշխատատեղից» բառերից հետո լրացնել «(ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք)» բառերով,

ը. 5-րդ կետի 5.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող՝ ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:

- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ:»,

թ. 5-րդ կետի 5.9 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում.

- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ:»,

ժ. 6-րդ կետի 6.3 ենթակետում «Սույն կանոնակարգի իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները» բառերը փոխարինել «Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:» բառերով,

ժա.8-րդ կետի 8.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

»,

ժբ. 11-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

ժգ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Հավաստիացնում եմ, որ.

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը,

գ. վերոնշված անձը համապատասխանում է համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրություն

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն _____»:

13) Կանոնակարգ 3/01-ի 170-րդ կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Պաշտոն	Չափանիշ
1. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավարներ, այդ թվում՝	
1) խորհրդի նախագահ, խորհրդի անդամ	ա. բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ
2) պատասխանատու ակտուար	ա. ակտուարական, վիճակագրական, մաթեմատիկական, ինժեներատնտեսագիտական կրթություն, որը կարող է հավաստվել ՀՀ կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան դիպլոմով (վկայականով) կամ օտարերկրյա կազմակերպության կողմից տրված ակտուարի որակավորումը հավաստող համապատասխան փաստաթղթով, և (կամ) բ. առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
3) գործադիր տնօրեն, տնօրենության ղեկավար, տնօրենության անդամ, վարչության նախագահ, վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Սի-էֆ-էյ (CFA) կամ էֆ-Առ-էմ (FRM) կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ- Այ (CII) որակավորման դիպլոմ
4) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն	ա. բարձրագույն կրթության դեպքում՝ առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ապահովագրության ոլորտում, և բ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Սի-էֆ-էյ (CFA) կամ էֆ-Առ-էմ (FRM) կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ- Այ (CII) որակավորման դիպլոմ
5) ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ	ա. բարձրագույն կրթություն և բ. 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և, գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում.
6) գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ

7) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	ա. բարձրագույն կրթության դեպքում՝ առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և բ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2. Ապահովագրական բրոքերի պատասխանատու անձ, այդ թվում՝	
1) գործադիր տնօրեն, վարչության նախագահ, վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ.. առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, և գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Սի-էֆ-էյ (CFA) կամ էֆ-Առ-էմ (FRM) կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ- Այ (CII) որակավորման դիպլոմ
2) գլխավոր հաշվապահ	ա. բարձրագույն կրթություն և բ. 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, գ. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
3) ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ	Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական

14) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է):
15) Կանոնակարգ 3/01-ը լրացնել Հավելված 18-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2012 թ., N 372-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 372-Ն որոշմամբ

Հավելված 3ա
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը»
կանոնակարգ 3/01

Ղեկավարների գրանցման ընթացակարգը

N	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգը
	1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ, այդ թվում՝	
1	Ապահովագրական ընկերության/Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահ	Բ
2	Ապահովագրական ընկերության/Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամներ	Բ
3	Գործադիր տնօրեն	Բ
4	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
5	Տնօրենության ղեկավար	Բ
6	Տնօրենության անդամ	Բ
7	Վարչության նախագահ	Բ
8	Վարչության անդամ	Բ
9	Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն	Բ
10	Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրենի տեղակալ	Բ
11	Ներքին աուդիտի ղեկավար	Բ
12	Ներքին աուդիտի անդամ	Պ
13	Օտարերկրյա ապահովագրական ընկերության ներքին աուդիտի ղեկավար	Բ
14	Օտարերկրյա ապահովագրական ընկերության ներքին աուդիտի անդամ	Պ
15	Գլխավոր հաշվապահ	Բ
16	Գլխավոր հաշվապահի տեղակալ	Բ
17	Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	Բ
18	Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալ	Բ
19	Մասնաճյուղի տնօրեն	Պ
20	Մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	Պ
21	Պատասխանատու ակտուար	Բ
	2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ, այդ թվում՝	
1	Գործադիր տնօրեն	Բ
2	Վարչության նախագահ	Բ
3	Վարչության անդամ	Բ
4	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
5	Գլխավոր հաշվապահ	Բ
6	Ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ	Պ

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 372-Ն որոշմամբ

Հավելված 3բ
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկ

1. Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank)
2. Միջազգային հաշվարկների բանկ (Bank of International Settlements)
3. Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Black Sea Trade and Development Bank)
4. Կարիբյան զարգացման բանկ (Caribbean Development Bank)
5. Կենտրոնական Ամերիկայի տնտեսական ինտեգրման բանկ (Central American Bank of Economic Integration)
6. Լատինական Ամերիկայի զարգացման բանկ (Corporation Andina de Fomento)
7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (European Bank for Reconstruction and Development)
8. Եվրոպական հանձնաժողով (European Commission)
9. Եվրոպական ներդրումային բանկ (European Investment Bank)
10. Ներամերիկյան զարգացման բանկ (Inter-American Development Bank)
11. Միջազգային արժութային հիմնադրամ (International Monetary Fund)
12. Իսլամական զարգացման բանկ (Islamic Development Bank)
13. Սկանդինավյան զարգացման հիմնադրամ (Nordic Development Fund)
14. Սկանդինավյան ներդրումային բանկ (Nordic Investment Bank)
15. Նավթ արտահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ (OPEC Fund for International Development)
16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Co-operation and Development)
17. Նավթանյութեր արտահանող երկրների կազմակերպություն (Organization of Petroleum-Exporting Countries)
18. Համաշխարհային բանկի խումբ (World Bank Group)
    1) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (International Bank for Reconstruction and Development)
    2) Միջազգային զարգացման ասոցիացիա (International Development Association)
    3) Միջազգային ֆինանսական կորպորացիա (International Finance Corporation)
    4) Բազմազգ ներդրումների երաշխավորման գործակալություն (Multinational Investment Guarantee Agency)
    5) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (International Centre for Settlement of Investment Disputes)
19. Վերակառուցման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau (KfW))
20. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների ֆինանսական կազմակերպություններ

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 372-Ն որոշմամբ

Հավելված 12
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը»
կանոնակարգ 3/01

Ապահովագրական ընկերության կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/ _____թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է

_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)

որոշմամբ

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 372-Ն որոշմամբ

Հավելված 18
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը»
կանոնակարգ 3/01

Միջնորդագիր
Ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ

Խնդրում ենք սույն միջնորդագրում նշված անձին գրանցել որպես ղեկավար և կից ներկայացնում ենք նրա վերաբերյալ տեղեկությունները:

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
☐ *Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները*
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ներկայացուցչության ղեկավար Դուք պետք է հանդիսանաք)*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ o բանկ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o ներդրումային ընկերություն o վճարահաշվարկային կազմակերպություն o դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն
2. Անձնական տվյալներ
2.2. Անուն, ազգանուն, հայրանուն
2.2. Սեռ՝ o արական o իգական
2.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
2.4. Ծննդավայր
2.5. Քաղաքացիություն
2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)
2.7. Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարանիշը), (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
2.8. Բնակության վայրը (մշտական և տվյալ պահին)
2.9. Հեռախոսահամար
2.10. Էլեկտրոնային փոստի հասցե

2.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը.

Անուն, ազգանուն, հայրանուն

Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

3. Ղեկավար պաշտոն

3.1. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար.

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Սովորելու ժամանակաշրջանը (--թ-ից մինչև --թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակեր-պության անվանում	Գտնվելու վայր	Հեռախո-սահամար	Պաշտոնը, հիմնական պարտակա-նությունները	Ազատման հիմքերը

Նշել միջանկյալ չաշխատած ժամանակահատվածներում ինչով եք զբաղվել

Չաշխատած ժամանակահատված	Նկարագրություն

5. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից
լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ընկերությունների ներկայացուցչությունների ղեկավարների վերաբերյալ տեղեկատվության ստացումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 5-րդ մասը, 45-րդ հոդվածի 5-րդ մասը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, 221-րդ հոդվածի 1-ին մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 18-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:»:

2) Կանոնակարգը լրացնել 18.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում օտարերկրյա ներդրումային ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:»:

3) Կանոնակարգի 21-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:»:

4) Կանոնակարգը լրացնել 21.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում ներդրումային ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:»:

5) Կանոնակարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետում «նմուշները» բառից հետո լրացնել «կամ միջնորդագիր ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի,» բառերով:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.2013 թ. (ՀՀԳՏ N7 (451), 1.03.2013):

6) Կանոնակարգը լրացնել 23.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«23.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում ներդրումային ընկերությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:»:

7) Կանոնակարգի Հավելված 15-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):
8) Կանոնակարգը լրացնել Հավելված 17-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2012 թ., N 373-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 373-Ն որոշմամբ

Հավելված 15
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը»
կանոնակարգ 4/01-ի Հավելված

Կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/ _____թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է

_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)

որոշմամբ

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 373-Ն որոշմամբ

Հավելված 17
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը»
կանոնակարգ 4/01-ի Հավելվածի

Միջնորդագիր
Ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ

Խնդրում ենք սույն միջնորդագրում նշված անձին գրանցել որպես ղեկավար և կից ներկայացնում ենք նրա վերաբերյալ տեղեկությունները:

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
☐ *Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները*
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ներկայացուցչության ղեկավար Դուք պետք է հանդիսանաք)*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ o բանկ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o ներդրումային ընկերություն o վճարահաշվարկային կազմակերպություն o դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն
2. Անձնական տվյալներ
2.3. Անուն, ազգանուն, հայրանուն
2.2. Սեռ՝ o արական o իգական
2.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
2.4. Ծննդավայր
2.5. Քաղաքացիություն
2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)
2.7. Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարանիշը), (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
2.8. Բնակության վայրը (մշտական և տվյալ պահին)

2.9. Հեռախոսահամար

2.10. Էլեկտրոնային փոստի հասցե

2.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը,

Անուն, ազգանուն, հայրանուն

Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

3. Ղեկավար պաշտոն

3.1. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար.

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Սովորելու ժամանակաշրջանը (--թ-ից մինչև --թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակեր-պության անվանում	Գտնվելու վայր	Հեռախո-սահամար	Պաշտոնը, հիմնական պարտակա-նությունները	Ազատման հիմքերը

Նշել միջանկյալ չաշխատած ժամանակահատվածներում ինչով եք զբաղվել

Չաշխատած ժամանակահատված	Նկարագրություն

5. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից
լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով

օպտիմալացնել ղեկավարների գրանցումը՝ գործընթացների պարզեցման և պահանջվող տեղեկատվության կրճատման միջոցով,

ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների ֆինանսական համակարգում տեղաշարժման ճկունությունը՝ արդեն իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված և օրենքով սահմանված մերժման հիմքեր չունեցող ղեկավարների կողմից այլ պաշտոն զբաղեցնելու դեպքում գրանցման որոշ գործընթացներից ազատելու միջոցով,

ապահովել միջազգային ճանաչում ունեցող կազմակերպություններում աշխատանքային փորձ ունեցող և մի շարք ուսումնական կենտրոնների կողմից որակավորում կամ դիպլոմ ստացած ղեկավարների գրանցումը՝ առանց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացված որակավորման վկայականի,

հնարավորինս միասնականացնել տարբեր ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման գործընթացները,

հիմք ընդունելով

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, 114-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը, 221-րդ հոդվածի 4-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 11-րդ կետի 5-րդ ենթակետից «, կարգապահական հանձնաժողովի նախագահը» բառերը հանել:
2) Կանոնակարգի 12-րդ կետի 5-րդ ենթակետը լրացնել հետևյալ բառերով. «, ինչպես նաև օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահը»:
3) Կանոնակարգի 16.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «16.1. Կենտրոնական բանկը հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 1 օր առաջ թեկնածուին տեղեկացնում է հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:»:
4) Կանոնակարգի 23-րդ կետի աղյուսակի 3.3 տողը ուժը կորցրած ճանաչել:
5) Կանոնակարգի 41-րդ կետի 6-րդ ենթակետից «, կարգապահական հանձնաժողովի նախագահի» բառերը հանել:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.2013 թ. (ՀՀՊՏ N7 (451), 1.03.2013):

6) Կանոնակարգի գլուխ 12-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 12. ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ (ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԻ) ԳՐԱՆՑՈՒՄԸ

50. Ղեկավարների և պատասխանատու անձանց (որակավորվող անձանց) գրանցումը իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ և բարդ: Գրանցվող ղեկավարների և պատասխանատու անձանց գրանցման ընթացակարգերը, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 2ա-ով:

50.1. Բարդ ընթացակարգով գրանցումը ներառում է.

1) թեկնածուների որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով սույն Կանոնակարգով սահմանված կարգով, բացառությամբ 54-րդ և 54.2 կետերով սահմանված դեպքերի,
2) թեկնածուի անձի՝ որպես ղեկավարի կամ պատասխանատու աշխատակցի, գնահատում՝ կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության, ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
3) թեկնածուների հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով, բացառությամբ 54.3 կետի:

50.2. Պարզ ընթացակարգով գրանցումը ներառում է.

1) թեկնածուների որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով, բացառությամբ 54-րդ և 54.2 կետերով սահմանված դեպքերի,
2) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

50.3. Անձին որպես ղեկավար (պատասխանատու անձ) գրանցելու կամ ղեկավարների (պատասխանատու անձանց) կազմում փոփոխությունները գրանցելու համար ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար.
   ա. անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,
   բ. իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,
2) Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարների և պատասխանատու անձանց գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացվում անձին որպես ղեկավար կամ պատասխանատու անձ գրանցելու կամ փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի:

50.4. Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագրի 2.6, 2.8-2.10, 3.3 ենթակետերով, ինչպես նաև 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխությունները ներդրումային ընկերությանը, օպերատորին կամ Կենտրոնական դեպոզիտարիային հայտնի դառնալուց հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում: Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը (տեղեկանքը) և սույն կետով սահմանված իրավասու մարմնի որոշման սքան արված տարբերակը ներդրումային ընկերության, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը ներկայացվում է էքսել (excel) ֆորմատով՝ հաստատած գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ: Ընդ որում, նշված միջնորդագրով (տեղեկանքով) ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը:

50.5. Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերությունը, օպերատորը և Կենտրոնական դեպոզիտարիան պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն համապատասխան իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

51. Կենտրոնական բանկը պարտավոր է ղեկավարների (պատասխանատու անձանց) կազմում կատարված փոփոխությունների գրանցման համար սույն կանոնակարգի համապատասխան գլուխներով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից հետո օրենքով սահմանված ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ: Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրելու պահից հետո օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրվանից՝ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ, եթե Կենտրոնական բանկը 52-52.1 կետերի ուսումնասիրության արդյունքում, Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ բանավոր կամ գրավոր ծանուցման միջոցով, չի պահանջում անձին գրանցել բարդ ընթացակարգով: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև կանոնակարգի 63-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: Եթե Կենտրոնական բանկը պահանջում է պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարի թեկնածուին գրանցել բարդ ընթացակարգով, ապա Կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է համապատասխանաբար ներդրումային ընկերությանը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին, օպերատորին կամ Կենտրոնական դեպոզիտարիային, իսկ ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր են ծանուցման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում ղեկավարի թեկնածուին ներկայացնել բարդ ընթացակարգով գրանցման: Նշված դեպքում պահպանվում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

51.1. Սույն կանոնակարգի 51-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան ղեկավարին (ղեկավարներին) ներկայացնում են բարդ ընթացակարգով գրանցման այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել ներդրումային ընկերությանը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղին, օպերատորին կամ Կենտրոնական դեպոզիտարիային՝ ղեկավարին (ղեկավարներին) պարզ ընթացակարգով գրանցման ներկայացնելու հնարավորության մասին:

51.2. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն Կանոնակարգի Հավելված 2-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում համապատասխանաբար ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան դիմում է Կենտրոնական բանկ նույն անձին ղեկավար գրանցելու միջնորդությամբ, ապա սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն միջնորդագրի 1-ին կետի բոլոր դաշտերը, 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է: Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային մասնաճյուղը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

51.3. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահի և խորհրդի անդամների, ինչպես նաև սույն կանոնակարգով սահմանված դեպքում՝ օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի անդամի գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 39.1 կետում նշված Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկն անհրաժեշտ չի համարում հարցազրույցի անցկացումը, որի դեպքում սույն կետում նշված ղեկավարները գրանցվում են առանց հարցազրույցի հրավիրվելու:

52. Եթե ներդրումային ընկերության կամ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական

վիճակի վատթարացում, կամ Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները կամ սույն կանոնակարգի 50.5 կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

52.1. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և (կամ) այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի և (կամ) ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

53. Որակավորվող անձի գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ, եթե՝

1) առկա են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածով, 58-րդ հոդվածի 2-րդ մասով, 114-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանները,
2) որակավորվող անձը չի համապատասխանում սույն կանոնակարգի գլուխ 13-ով սահմանված չափանիշներից առնվազն մեկին,
3) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

53.1. Եթե ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի որակավորվող անձը զրկվել է որակավորման վկայականից, ապա որակավորվող անձին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի որակավորվող անձ:

7) Կանոնակարգի 54-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«54. Որակավորվող անձը ստորև նշված որևէ պաշտոնում աշխատելու նպատակով գրանցվելու համար պետք է բավարարի նաև հետևյալ չափանիշները, ընդ որում, որակավորվող անձինք համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող, եթե բավարարում են սույն կետով սահմանված միջազգային որակավորում ունենալու պահանջին:

Պաշտոն	Չափանիշ
1. Ներդրումային ընկերության ղեկավարներ, այդ թվում՝	
1.1. տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահ, խորհրդի անդամ	ա) բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ և բ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
1.2. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA)կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
1.3. մասնաճյուղի տնօրեն	ա) բարձրագույն կրթություն և բ) 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և, գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
1.4. ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ներդրումային ընկերության ներքին աուդիտի ղեկավարը	ա) բարձրագույն կրթություն և բ) 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և, գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-ԱՅ-ԷՅ (CIA) որակավորում

1.5 ներքին աուդիտի անդամը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամը	ա) բարձրագույն կրթություն և բ) 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և, գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում
1.6. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2. Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
3. Օպերատորի ղեկավար, այդ թվում՝	
3.1. դիտորդ խորհրդի նախագահ և անդամ	ա) բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ և բ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
3.2. գործադիր մարմնի ղեկավար և անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
3.3 կարգապահական հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
3.4 վերահսկող ծառայության կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	ա) բարձրագույն կրթություն և բ) 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և, գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում
4. Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, այդ թվում՝	
4.1. դիտորդ խորհրդի նախագահ և անդամ	ա) բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ և բ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
4.2. գործադիր մարմնի կամ նման այլ մարմնի ղեկավար, և անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
4.3. վերստուգող հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	ա) բարձրագույն կրթություն և բ) 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և, գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում.

»:

8) Կանոնակարգը լրացնել 54.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«54.2. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների այն թեկնածուները, որոնք աշխատել են սույն կանոնակարգի Հավելված 2բ-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և իրականացրել են համանման պարտականություններ և/կամ զբաղեցրել են նմանատիպ պաշտոններ, համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող:»:

9) Կանոնակարգը լրացնել 54.3 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«54.3. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարներին 50.1 կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:»:

10) Կանոնակարգի 65-րդ կետից հանել «, կարգապահական հանձնաժողովի կամ նման այլ մարմնի նախագահ» բառերը:

11) Կանոնակարգի Հավելված 2-ում.

ա. 1-ին կետի 1.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ.

- o բանկ
- o օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- o վարկային կազմակերպություն
- o ապահովագրական ընկերություն
- o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ
- o ապահովագրական բրոքեր
- o ներդրումային ընկերություն
- o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ
- o կարգավորվող շուկայի օպերատոր
- o Կենտրոնական դեպոզիտարիա
- o ֆոնդի կառավարիչ
- o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ
- o բյուրո
- o վճարահաշվարկային կազմակերպություն
- o դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն»,

բ. 2-րդ կետի 2.6 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)»,

գ. 2-րդ կետի 2.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.7. Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը) (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)»,

դ. 3-րդ կետի 3.2 ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 3-րդ կետը լրացնել 3.5 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.5. Նշեք նշված պաշտոնում Ձեր պաշտոնավարման սկիզբը՝ ըստ իրավասու կառավարման մարմնի որոշման՝

(օր/ամիս/տարի)»,

զ. 4-րդ կետի 4.3 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից).

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը

»,

է. 4-րդ կետի 4.4 ենթակետը «վերջին աշխատատեղից» բառերից հետո լրացնել «(ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք)» բառերով,

ը. 5-րդ կետի 5.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող՝ ֆինանսական կազմակերպության ֆինանսական

վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:

○ Ոչ,

○ Այո, ներկայացնել մանրամասներ»,

բ. 5-րդ կետի 5.9 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում:

○ Ոչ,

○ Այո, ներկայացնել մանրամասներ»,

ժ. 6-րդ կետի 6.3 ենթակետում «ամուսինը և երեխաները» բառերը փոխարինել «ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը (եթե համատեղ տնտեսություն են վարում)» բառերով:

ժա. 8-րդ կետի 8.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

»,

ժբ. 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

ժգ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Հավաստիացնում եմ, որ.

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական,

բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը,

գ. վերոնշյալ անձը համապատասխանում է համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրություն

Ֆինանսական կազմակերպության կառավարման
մարմնի կողմից
լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն _____»:

12) Կանոնակարգը լրացնել Հավելված 2ա-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

13) Կանոնակարգը լրացնել Հավելված 2բ-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

28 դեկտեմբերի 2012 թ., N 374-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 374-Ն որոշմամբ

Հավելված 2ա
«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

N	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգը
1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻՆՔ, այդ թվում՝		
1.	Տնօրենների խորհրդի նախագահը	Բ
2.	Տնօրենների խորհրդի անդամները	Բ
3.	Գործադիր մարմնի ղեկավարը	Բ
4.	Գործադիր մարմնի անդամները	Բ
5.	Գործադիր տնօրենի տեղակալը	Բ
6.	Գլխավոր հաշվապահը	Բ
7.	Գլխավոր հաշվապահի տեղակալը	Բ
8.	Ներքին աուդիտի ղեկավարը	Բ
9.	Ներքին աուդիտի անդամները	Պ
10.	Մասնաճյուղի տնօրենը	Պ
11.	Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը	Պ
12.	Բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը	Պ
2. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐ, այդ թվում՝		
1.	Դիտորդ խորհրդի նախագահը	Բ
2.	Դիտորդ խորհրդի անդամները	Բ
3.	Գործադիր մարմնի ղեկավարը	Բ
4.	Գործադիր մարմնի անդամը	Բ
5.	Գործադիր մարմնի ղեկավարի տեղակալը	Բ
6.	Վերահսկող ծառայության ղեկավարը	Բ
7.	Վերահսկող ծառայության անդամը	Պ
8.	Կարգապահական հանձնաժողովի նախագահը	Բ
3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ		
1.	Դիտորդ խորհրդի նախագահը	Բ
2.	Դիտորդ խորհրդի անդամները	Բ
3.	Գործադիր մարմնի ղեկավարը	Բ
4.	Գործադիր մարմնի անդամները	Բ
5.	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
6.	Վերստուգող հանձնաժողովի ղեկավարը	Բ

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 374-Ն որոշմամբ

Հավելված 2բ
«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի Հավելվածի

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկ

1. Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank)
2. Միջազգային հաշվարկների բանկ (Bank of International Settlements)
3. Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Black Sea Trade and Development Bank)
4. Կարիբյան զարգացման բանկ (Caribbean Development Bank)
5. Կենտրոնական Ամերիկայի տնտեսական ինտեգրման բանկ (Central American Bank of Economic Integration)
6. Լատինական Ամերիկայի զարգացման բանկ (Corporation Andina de Fomento)
7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (European Bank for Reconstruction and Development)
8. Եվրոպական հանձնաժողով (European Commission)
9. Եվրոպական ներդրումային բանկ (European Investment Bank)
10. Ներամերիկյան զարգացման բանկ (Inter-American Development Bank)
11. Միջազգային արժութային հիմնադրամ (International Monetary Fund)
12. Իսլամական զարգացման բանկ (Islamic Development Bank)
13. Սկանդինավյան զարգացման հիմնադրամ (Nordic Development Fund)
14. Սկանդինավյան ներդրումային բանկ (Nordic Investment Bank)
15. Նավթ արտահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ (OPEC Fund for International Development)
16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Co-operation and Development)
17. Նավթանյութեր արտահանող երկրների կազմակերպություն (Organization of Petroleum-Exporting Countries)
18. Համաշխարհային բանկի խումբ (World Bank Group)
    1) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (International Bank for Reconstruction and Development)
    2) Միջազգային զարգացման ասոցիացիա (International Development Association)
    3) Միջազգային ֆինանսական կորպորացիա (International Finance Corporation)
    4) Բազմազգ ներդրումների երաշխավորման գործակալություն (Multinational Investment Guarantee Agency)
    5) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (International Centre for Settlement of Investment Disputes)
19. Վերակառուցման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau (KfW))
20. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների ֆինանսական կազմակերպություններ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը և 61-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգի Հավելված 18-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
25 դեկտեմբերի 2012 թ., N 375-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.2013 թ. (ՀՀԳՏ N7 (451), 1.03.2013):

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 375-Ն որոշմամբ

Հավելված 18
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 10/01-ի

Կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/ _____թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)

որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով

օպտիմալացնել ղեկավարների գրանցումը գործընթացների պարզեցման և պահանջվող տեղեկատվության կրճատման միջոցով,

ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների ֆինանսական համակարգում տեղաշարժման ճկունությունը՝ արդեն իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված և օրենքով սահմանված մերժման հիմքեր չունեցող ղեկավարների կողմից այլ պաշտոն զբաղեցնելու դեպքում գրանցման որոշ գործընթացներից ազատելու միջոցով,

ապահովել միջազգային ճանաչում ունեցող կազմակերպություններում աշխատանքային փորձ ունեցող և մի շարք ուսումնական կենտրոնների կողմից որակավորում կամ դիպլոմ ստացած ղեկավարների գրանցումը՝ առանց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացված որակավորման վկայականի,

հնարավորինս միասնականացնել տարբեր ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման գործընթացները,

հիմք ընդունելով

«Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը, 66-րդ հոդվածի 1-ին մասը և 88-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը հաստատելու մասին» թիվ 115-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20. Կենտրոնական բանկը հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 1 օր առաջ թեկնածուին տեղեկացնում է հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:»:

2) Կանոնակարգի գլուխ 11-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 11. ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ (ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԻ) ԳՐԱՆՑՈՒՄԸ

53. Ղեկավարների և պատասխանատու անձանց (որակավորվող անձանց) գրանցումը իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ և բարդ: Գրանցվող ղեկավարների և պատասխանատու անձանց գրանցման ընթացակարգերը, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է Կանոնակարգի Հավելված 2ա-ով:

54. Բարդ ընթացակարգով գրանցումը ներառում է.

1) թեկնածուների որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով սույն Կանոնակարգով սահմանված կարգով՝ բացառությամբ 63-րդ և 63.1 կետերով սահմանված դեպքերի,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.2013 թ. (ՀՀԳՏ N7 (451), 1.03.2013):

2) թեկնածուի անձի՝ որպես ղեկավարի կամ պատասխանատու աշխատակցի, գնահատում՝ կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության, ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
3) թեկնածուների հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով, բացառությամբ 63.2 կետի:

55. Պարզ ընթացակարգով գրանցումը ներառում է.
1) թեկնածուների որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով, բացառությամբ 63-րդ և 63.1 կետերով սահմանված դեպքերի,
2) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

56. Անձին որպես ղեկավար (պատասխանատու անձ) գրանցելու կամ ղեկավարների (պատասխանատու անձանց) կազմում փոփոխությունները գրանցելու համար ֆոնդի կառավարիչը, օտարերկրյա ֆոնդի մասնաճյուղը կամ ֆոնդի պահառուն Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
1) Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար.
   ա. անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն կանոնակարգի Հավելված 2-ի,
   բ. իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,
2) Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարների և պատասխանատու անձանց գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացվում անձին որպես ղեկավար կամ պատասխանատու անձ գրանցելու կամ փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:

57. Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագրի 2.6, 2.8-2.10, 3.3 ենթակետերով, ինչպես նաև 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխությունները ֆոնդի կառավարչին կամ ֆոնդի պահառուին հայտնի դառնալուց հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում: Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը (տեղեկանքը) և սույն կետով սահմանված իրավասու մարմնի որոշման սքան արված տարբերակը ֆոնդի կառավարչի կամ ֆոնդի պահառուի կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը ներկայացվում է էքսել (excel) ֆորմատով՝ հաստատված գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ: Ընդ որում, նշված միջնորդագրով (տեղեկանքով) ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը:

58. Ֆոնդի կառավարիչը, օտարերկրյա ֆոնդի մասնաճյուղը և ֆոնդի պահառուն պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն համապատասխան իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին Կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

59. Կենտրոնական բանկը պարտավոր է ղեկավարների (պատասխանատու անձանց) կազմում կատարված փոփոխությունների գրանցման համար սույն կանոնակարգի համապատասխան գլուխներով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից հետո՝ օրենքով սահմանված ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ: Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրելու պահից հետո՝ օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրվանից՝ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 60-60.1 կետերի ուսումնասիրության արդյունքում, Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ բանավոր կամ գրավոր ծանուցման միջոցով, չի

պահանջում անձին գրանցել բարդ ընթացակարգով: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև կանոնակարգի 75-րդ կետով սահմանված 90-օրյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: Եթե Կենտրոնական բանկը պահանջում է պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարի թեկնածուին գրանցել բարդ ընթացակարգով, ապա Կենտրոնական բանկը այդ մասին ծանուցում է, համապատասխանաբար, ֆոնդի կառավարչին, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղին կամ ֆոնդի պահառուին, իսկ ֆոնդի կառավարիչը, օտարերկրյա ֆոնդի կառավարիչը կամ ֆոնդի պահառուն պարտավոր է ծանուցման օրվանը հաջորդող 5-օրյա ժամկետում ղեկավարի թեկնածուին ներկայացնել բարդ ընթացակարգով գրանցման: Նշված դեպքում պահպանվում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

59.1. Սույն կանոնակարգի 59-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո ֆոնդի կառավարիչը, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղը կամ ֆոնդի պահառուն ղեկավարին (ղեկավարներին) ներկայացնում է բարդ ընթացակարգով գրանցման այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել ֆոնդի կառավարչին, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղին կամ ֆոնդի պահառուին՝ ղեկավարին (ղեկավարներին) պարզ ընթացակարգով գրանցման ներկայացնելու հնարավորության մասին:

59.2. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն Կանոնակարգի Հավելված 2-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում համապատասխանաբար ֆոնդի կառավարիչը կամ ֆոնդի պահառուն դիմում է Կենտրոնական բանկ նույն անձին ղեկավար գրանցելու միջնորդությամբ, ապա Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն միջնորդագրի 1-ին կետի բոլոր դաշտերը, 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է: Ֆոնդի կառավարիչը կամ ֆոնդի պահառուն նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

59.3. Ֆոնդի կառավարչի, օտարերկրյա ֆոնդի կառավարչի խորհրդի նախագահի և խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 40-րդ կետում նշված Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկն անհրաժեշտ չի համարում հարցազրույցի անցկացումը, որի դեպքում սույն կետում նշված ղեկավարները գրանցվում են առանց հարցազրույցի հրավիրվելու:

60. Եթե ֆոնդի կառավարչի կամ օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ ֆոնդի պահառուի մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները կամ սույն կանոնակարգի 58-րդ կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

60.1. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և (կամ) այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր ֆոնդի կառավարչի, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի, ֆոնդի պահառուի և (կամ) ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

61. Որակավորվող անձի գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ, եթե՝

1) առկա են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները,

2) որակավորվող անձը չի համապատասխանում սույն կանոնակարգի 12-րդ գլխով սահմանված չափանիշներից առնվազն մեկին,

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

62. Եթե ֆոնդի կառավարչի կամ ֆոնդի պահառուի որակավորվող անձը զրկվել է որակավորման վկայականից, ապա որակավորվող անձին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ֆոնդի կառավարչի կամ ֆոնդի պահառուի որակավորվող անձ:»:

3) Կանոնակարգի 63-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«63. Որակավորվող անձը ստորև նշված որևէ պաշտոնում աշխատելու նպատակով գրանցվելու համար պետք է բավարարի նաև հետևյալ չափանիշները, ընդ որում, որակավորվող անձինք համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող, եթե բավարարում են սույն կետով սահմանված միջազգային որակավորում ունենալու պահանջին:

Պաշտոն	Չափանիշ
1. Ֆոնդի (բացառությամբ՝ կամավոր կենսաթոշակային ֆոնդի և պարտադիր կենսաթոշակային ֆոնդի) կառավարչի ղեկավարներ և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
1) Ֆոնդի կառավարչի ղեկավար, այդ թվում՝	
ա. խորհրդի նախագահ, անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին ղեկավար պաշտոնում և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
բ. գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	1. բարձրագույն կրթություն և 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
գ. ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
դ. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարը	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ CIA որակավորում.
ե. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամը, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամը	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-ԱՅ-ԷՅ (CIA) որակավորում.
զ. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ	1. բարձրագույն կրթություն և 2. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
2. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ղեկավարներ և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
1) Ֆոնդի կառավարչի ղեկավար, այդ թվում՝	
ա. խորհրդի նախագահ, անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին ղեկավար պաշտոնում և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
բ. գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին ղեկավար պաշտոնում և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ

գ. ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
դ. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում.
ե. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում.
զ. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում	1. բարձրագույն կրթություն, 2. ակտիվների կառավարման առնվազն 3 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 1 տարվա փորձ և ՍԻ-էՖ-էյ (CFA) առնվազն 1 փուլը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
3) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում	1. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 3 տարվա փորձ կամ ակտիվների կառավարման առնվազն 1 տարվա փորձ և ՍԻ-էՖ-էյ-ի (CFA) առնվազն 1 փուլը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ 2. 1) բարձրագույն կրթություն, 2) էյ-ՍԻ-ՍԻ-էյ, ՍԻ-ՓԻ-էյ (ACCA, CPI) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ղեկավարներ և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
1) Ֆոնդի կառավարչի ղեկավար, այդ թվում՝	
ա. խորհրդի նախագահ, անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
բ. գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին ղեկավար պաշտոնում և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
գ. ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
դ. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, 3. միջազգային աուդիտորական որակավորման (Սի-Այ-էյ) փուլերից առնվազն մեկը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) և 4. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
ե. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում.
զ. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.

2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում	1. բարձրագույն կրթություն, 2. ակտիվների կառավարման առնվազն 5 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 2 տարվա փորձ և Սի-էֆ-էյ-ի (CFA) առնվազն երկու փուլը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
3) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում	1. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 5 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 2 տարվա փորձ և Սի-էֆ-էյ-ի (CFA) առնվազն երկու փուլը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ 2. 1) բարձրագույն կրթություն, 2) էյ-Սի-Սի-էյ, Սի-Փի-էյ (ACCA, CPI) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
4. Ֆոնդի պահառուի ղեկավար և աշխատակից	
1) ֆոնդի պահառուի ղեկավար	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ Սի-էֆ-էՅ (CFA) կամ էՅ-ԱՌ-էՄ (FRM) կամ էՅ-ՍԻ-Սի-էՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2) Ֆոնդի պահառուի աշխատակից	1. բարձրագույն կրթություն և 2. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական

»:

4) Կանոնակարգը լրացնել 63.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«63.1. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների այն թեկնածուները, որոնք աշխատել են Կանոնակարգի Հավելված 2բ-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և իրականացրել են համանման պարտականություններ և/կամ զբաղեցրել են նմանատիպ պաշտոններ, համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող:»:

5) Կանոնակարգը լրացնել 63.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«63.2. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարներին 54-րդ կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:»:

6) Կանոնակարգի Հավելված 2-ում.

ա. 1-ին կետի 1.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ՝

- բանկ
- օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- վարկային կազմակերպություն
- ապահովագրական ընկերություն
- օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ
- ապահովագրական բրոքեր
- ներդրումային ընկերություն
- օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ
- կարգավորվող շուկայի օպերատոր
- Կենտրոնական դեպոզիտարիա
- ֆոնդի կառավարիչ
- օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ
- բյուրո
- վճարահաշվարկային կազմակերպություն
- դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն»,

բ. 2-րդ կետի 2.6 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում են նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)»,

գ. 2-րդ կետի 2.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.7. Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը) (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)»,

դ. 3-րդ կետի 3.2 ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 3-րդ կետը լրացնել 3.5 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.5. Նշեք նշված պաշտոնում Ձեր պաշտոնավարման սկիզբն ըստ իրավասու կառավարման մարմնի որոշման.

(օր/ամիս/տարի)»:

զ. 4-րդ կետի 4.3 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից).

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը

»,

է. 4-րդ կետի 4.4 ենթակետը «վերջին աշխատատեղից» բառերից հետո լրացնել «(ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք)» բառերով,

ը. 5-րդ կետի 5.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է.

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ»,

թ. 5-րդ կետի 5.9 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում.

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ:»,

ժ. 6-րդ կետի 6.3 ենթակետում «ամուսինը և երեխաները» բառերը փոխարինել «ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը (եթե համատեղ տնտեսություն են վարում)» բառերով,

ժա. 8-րդ կետի 8.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

»,

ժբ. 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

ժգ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Հավաստիացնում եմ, որ.

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական,

բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը,

գ. վերոնշված անձը համապատասխանում է համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրություն

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից
լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն _____»:

7) Կանոնակարգը լրացնել Հավելված 2ա-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):
8) Կանոնակարգը լրացնել Հավելված 2բ-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2012 թ., N 376-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 376-Ն որոշմամբ

Հավելված 2ա
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի Հավելվածի

Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների գրանցման ընթացակարգը

Թիվ	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգը
	1. ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ, այդ թվում՝	
1	Դիտորդ խորհրդի նախագահ	Բ
2	Դիտորդ խորհրդի անդամներ	Բ
3	Գործադիր տնօրեն	Բ
4	Գործադիր մարմնի անդամներ	Բ
5	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
6	Գլխավոր հաշվապահ	Բ
7	Գլխավոր հաշվապահի տեղակալ	Բ
8	Ներքին աուդիտի ղեկավար	Բ
9	Ներքին աուդիտի անդամներ	Պ
10	Մասնաճյուղի տնօրեն	Պ
11	Ֆոնդի կառավարչի կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ	Պ
	2. ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒ	
1	Ղեկավար	Բ
2	Աշխատակից	Պ

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 376-Ն որոշմամբ

Հավելված 2բ
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի Հավելվածի

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկ

1. Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank)
2. Միջազգային հաշվարկների բանկ (Bank of International Settlements)
3. Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Black Sea Trade and Development Bank)
4. Կարիբյան զարգացման բանկ (Caribbean Development Bank)
5. Կենտրոնական Ամերիկայի տնտեսական ինտեգրման բանկ (Central American Bank of Economic Integration)
6. Լատինական Ամերիկայի զարգացման բանկ (Corporation Andina de Fomento)
7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (European Bank for Reconstruction and Development)
8. Եվրոպական հանձնաժողով (European Commission)
9. Եվրոպական ներդրումային բանկ (European Investment Bank)
10. Ներամերիկյան զարգացման բանկ (Inter-American Development Bank)
11. Միջազգային արժութային հիմնադրամ (International Monetary Fund)
12. Իսլամական զարգացման բանկ (Islamic Development Bank)
13. Սկանդինավյան զարգացման հիմնադրամ (Nordic Development Fund)
14. Սկանդինավյան ներդրումային բանկ (Nordic Investment Bank)
15. Նավթ արտահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ (OPEC Fund for International Development)
16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Co-operation and Development)
17. Նավթանյութեր արտահանող երկրների կազմակերպություն (Organization of Petroleum-Exporting Countries)
18. Համաշխարհային բանկի խումբ (World Bank Group)
    1) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (International Bank for Reconstruction and Development)
    2) Միջազգային զարգացման ասոցիացիա (International Development Association)
    3) Միջազգային ֆինանսական կորպորացիա (International Finance Corporation)
    4) Բազմազգ ներդրումների երաշխավորման գործակալություն (Multinational Investment Guarantee Agency)
    5) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (International Centre for Settlement of Investment Disputes)
19. Վերակառուցման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau (KfW))
20. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների ֆինանսական կազմակերպություններ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով

օպտիմալացնել ղեկավարների գրանցումը գործընթացների պարզեցման և պահանջվող տեղեկատվության կրճատման միջոցով,

ապահովել ֆինանսական համակարգում տեղաշարժման ճկունությունը՝ արդեն իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված և օրենքով սահմանված մերժման հիմքեր չունեցող ղեկավարների կողմից այլ պաշտոն զբաղեցնելու դեպքում գրանցման որոշ գործընթացներից ազատելու միջոցով,

ապահովել միջազգային ճանաչում ունեցող կազմակերպություններում աշխատանքային փորձ ունեցող և մի շարք ուսումնական կենտրոնների կողմից որակավորում կամ դիպլոմ ստացած ղեկավարների գրանցումը՝ առանց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացված որակավորման վկայականի,

հնարավորինս միասնականացնել տարբեր ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման գործընթացները,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի ««Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 13) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 13-ի 9-րդ կետը «(համաձայն սույն կանոնակարգի 35-րդ կետի)» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն կանոնակարգի 50.8-51-րդ կետերով նախատեսված դեպքերի» բառերով:
2) Կանոնակարգ 13-ի 20-րդ կետի 4-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:
3) Կանոնակարգ 13-ի 21-րդ կետում «20-րդ կետի 1), 2), 3) և 4)» բառերը փոխարինել «20-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ» բառերով, իսկ «24-րդ կետի 1), 2), 3) և 4)» բառերը փոխարինել «24-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ» բառերով:
4) Կանոնակարգ 13-ի 24-րդ կետը լրացնել 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
   «7) միջնորդագիր՝ ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 24-ի:»:
5) Կանոնակարգ 13-ը լրացնել 24.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
   «24.1. Ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու դեպքում, վարկային կազմակերպությունը պարտավոր է ներկայացուցչության ղեկավարին փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելուց

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.2013 թ. (ՀՀՊՏ N7 (451), 1.03.2013):

հետո 5-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել ներկայացուցչության նոր նշանակված ղեկավարի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 24-ի:»:

6) Կանոնակարգ 13-ի 49-րդ կետի 2-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

7) Կանոնակարգ 13-ի գլուխ 7-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 7. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

49.1. Վարկային կազմակերպությունների ղեկավարների գրանցումն իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ և բարդ: Գրանցվող ղեկավարների գրանցման ընթացակարգերը, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 3ա-ով:

1) Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

ա. Թեկնածուի որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ գլխի՝ բացառությամբ սույն կանոնակարգի 50.8-51-րդ կետերով նախատեսված դեպքերի,

բ. Թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության, ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,

գ. Թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 52-րդ կետով սահմանված դեպքերի:

2) Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

ա. Թեկնածուի որակավորման առկայություն՝ Կենտրոնական բանկում գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի միջոցով՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ գլխի՝ բացառությամբ սույն կանոնակարգի 50.8-51-րդ կետերով սահմանված դեպքերի,

բ. Թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստուգում՝ կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

50. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների համար.

ա. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին վարկային կազմակերպության միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,

բ. Իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,

2) Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարների գրանցման համար վարկային կազմակերպությունը պետք է Կենտրոնական բանկ ներկայացնի անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին վարկային կազմակերպության միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի:

50.1. Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագրի 2.6, 2.8-2.10, 3.3 ենթակետերում, ինչպես նաև սույն կանոնակարգի 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխությունները վարկային կազմակերպությանը հայտնի դառնալուց հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում: Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը (տեղեկանքը) և սույն կանոնակարգի 50-րդ կետով սահմանված իրավասու մարմնի որոշման սքան արված տարբերակը վարկային կազմակերպության կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը ներկայացվում է էքսել (excel) ֆայլով՝ հաստատված վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, նշված միջնորդագրով (տեղեկանքով) ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը:

50.2. Վարկային կազմակերպությունները պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն վարկային կազմակերպության իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

50.3. Վարկային կազմակերպության ղեկավարների կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ղեկավարները (բացառությամբ վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների) պետք է ունենան Կենտրոնական բանկի կողմից տրված որակավորման վկայական՝ բացառությամբ սույն կանոնակարգի 50.8-51 կետերով սահմանված դեպքերի:

50.4. Կենտրոնական բանկը պարտավոր է սույն գլխում սահմանված՝ ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների գրանցման համար համապատասխան գլուխներով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից հետո՝ օրենքով սահմանված ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ: Պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի համապատասխան որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 50.6-50.7 կետերի ուսումնասիրության արդյունքում, Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ բանավոր կամ գրավոր ծանուցման միջոցով, չի պահանջում անձին գրանցել բարդ ընթացակարգով: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 66-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: Եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 50.6 և/կամ 50.7 կետի համաձայն պահանջում է պարզ ընթացակարգով գրանցվող ղեկավարի թեկնածուին գրանցել բարդ ընթացակարգով, ապա Կենտրոնական բանկը այդ մասին ծանուցում է վարկային կազմակերպությանը, իսկ վարկային կազմակերպությունը պարտավոր է ծանուցման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում ղեկավարի թեկնածուին ներկայացնել բարդ ընթացակարգով գրանցման: Նշված դեպքում պահպանվում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

50.5. Սույն կանոնակարգի 50.4 կետում նշված ծանուցումը ստանալուց հետո վարկային կազմակերպությունը ղեկավարին (ղեկավարներին) ներկայացնում է բարդ ընթացակարգով գրանցման այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել վարկային կազմակերպությանը՝ ղեկավարին (ղեկավարներին) պարզ ընթացակարգով գրանցման ներկայացնելու հնարավորության մասին:

50.6. Եթե վարկային կազմակերպության մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, վարկային կազմակերպությունում, Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները, կամ սույն կանոնակարգի 50.2 կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում վարկային կազմակերպության բոլոր ղեկավարները գրանցվում են բարդ ընթացակարգով:

50.7. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և/կամ այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր վարկային կազմակերպության և/կամ ֆինանսական համակարգի կայունության համար, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

50.8. Վարկային կազմակերպության ղեկավարների թեկնածուները համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող, եթե ունեն իրենց պաշտոնի համար սույն կետով սահմանված հետևյալ որակավորումներից, դիպլոմներից կամ հավաստագրերից որևէ մեկը.

1) Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ, տնօրինության (վարչության) անդամ՝ Սի-էֆ-էյ (CFA) կամ էֆ-Առ-էմ (FRM) կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-Այ (CII) որակավորման դիպլոմ,

2) Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները,
3) Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամ՝ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում:

51. Վարկային կազմակերպության ղեկավարների այն թեկնածուները, որոնք աշխատել են սույն կանոնակարգի Հավելված 4բ-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և զբաղեցրել են նմանատիպ պաշտոններ և/կամ ստանձնել են համանման պարտականություններ, համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորման վկայական ունեցող:

52. Վարկային կազմակերպությունների ղեկավարներին սույն կանոնակարգի 49.1 կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

53. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Հավելված 2-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը, և հետագայում վարկային կազմակերպությունը դիմում է Կենտրոնական բանկ նույն անձին ղեկավար գրանցելու միջնորդությամբ, ապա Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն միջնորդագրի 1-ին կետի բոլոր դաշտերը, 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է: Վարկային կազմակերպությունը նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

54. Վարկային կազմակերպություն խորհրդի նախագահի և խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 38-րդ կետով նախատեսված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկն անհրաժեշտ չի համարում հարցազրույցի անցկացումը, որի դեպքում խորհրդի նախագահը և անդամները գրանցվում են առանց հարցազրույցի հրավիրվելու:

55. Որպես որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշ՝ սահմանվում է, որ գրանցման պահին վարկային կազմակերպության ղեկավարը պետք է իրազեկ լինի ֆինանսական համակարգի՝ մասնավորապես, վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգին և վարկային կազմակերպությունը կարգավորող ներքին ակտերին: Բացի այդ,

1) Վարկային կազմակերպության խորհրդի նախագահը պետք է ունենա.
   ա. Բարձրագույն կրթության առկայության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատությունը ավարտած լինելու կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական ստացած լինելու դեպքում՝ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 1 տարին՝ ղեկավար պաշտոնում,
   բ. Բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայականի բացակայության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած չլինելու դեպքում՝ 4 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 2 տարին՝ ղեկավար պաշտոնում:
2) Վարկային կազմակերպության գործադիր տնօրենը (վարչության նախագահը), գլխավոր հաշվապահը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը պետք է ունենան բարձրագույն կրթություն կամ ավարտած լինեն օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն, կամ ունենան Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 1 տարին՝ ղեկավար պաշտոնում:
3) Վարկային կազմակերպության խորհրդի անդամները, գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալը, տնօրենության (վարչության) անդամները, վերստուգիչ հանձնաժողովի ան-

դամները, գլխավոր հաշվապահի տեղակալը պետք է ունենան առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ:

56. Սույն կանոնակարգի 55-րդ կետում նշված աշխատանքային փորձը վերաբերում է գրանցման պահին նախորդող 10 տարիներին՝ բացառությամբ բարձրագույն կրթության կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայականի բացակայության, կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած չլինելու համար նախատեսված աշխատանքային փորձի:

57. Եթե ղեկավարի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 55-րդ կետով նախատեսված աշխատանքային փորձ և/կամ բարձրագույն կրթություն, ապա նա իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում աշխատելու համար իր մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և/կամ այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և/կամ այլ հիմնավորումների հիման վրա հանձնաժողովի դրական եզրակացությամբ Կենտրոնական բանկի նախագահն իրավունք ունի գրանցելու անձին համապատասխան պաշտոնում, եթե գտնում է, որ անձի մոտ առկա են այդ պաշտոնում աշխատելու համար բավարար գիտելիքներ ու հմտություններ:

58. Անձին, որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ, եթե ղեկավարի թեկնածուները.

1) ունեն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն,
2) դատարանի կողմից զրկված են ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
3) սնանկ են ճանաչվել և ունեն չմարված (չներված) պարտավորություններ,
4) քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,
5) չեն համապատասխանում սույն կանոնակարգի 55-րդ կետով սահմանված չափանիշին,
6) եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ են և չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

59. Անձին, որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի կողմից, եթե սույն կանոնակարգի 50.4 կետով սահմանված ծանուցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում վարկային կազմակերպությունը ղեկավարի թեկնածուին չի ներկայացնում բարդ ընթացակարգով գրանցման:

60. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ վարկային կազմակերպության ղեկավարը հանվում է գրանցումից, եթե.

1) որակավորման վկայականի գործունեության ժամկետը լրացել է, և ղեկավարը չի ստացել որակավորման նոր վկայական,
2) ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից,
3) վարկային կազմակերպությունը դիմել է համապատասխան միջնորդությամբ,
4) ի հայտ են եկել «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերը:

61. Վարկային կազմակերպության միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար վարկային կազմակերպությունները պարտավոր են փոփոխություններ կատարելու վերաբերյալ վարկային կազմակերպության իրավասու մարմնի կողմից որոշում ընդունելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ վարկային կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

62. Եթե վարկային կազմակերպության ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես վարկային կազմակերպության ղեկավար:

63. Սույն կանոնակարգի իմաստով վարկային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար են համարվում այն անձինք, որոնք, առանց համապատասխան պաշտոնում

Կենտրոնական բանկում գրանցման, իրականացնում են վարկային կազմակերպության ղեկավարի պարտականություններ:

64. Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող են նշանակվել (նշված պարտականությունները կարող են կատարել) միայն տվյալ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալը, վարչության նախագահի տեղակալը, վարչության (տնօրենության) անդամը:

65. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունները կարող է կատարել) տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի տեղակալը, կամ գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող վարկային կազմակերպության այլ աշխատակիցը:

66. Ղեկավարի պաշտոններում առանց որակավորման վկայականի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետ կարող է սահմանվել ոչ ավելի, քան 3 ամիս: Բացառություն են կազմում վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատարները, որոնք առանց որակավորման վկայականի չեն կարող պաշտոնավարել: Որակավորման վկայական ունեցող, սակայն Կենտրոնական բանկի կողմից չգրանցված անձինք կարող են աշխատել որպես ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավելի, քան 3 ամիս: Բացառություն են կազմում վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատարները, որոնք առանց Կենտրոնական բանկում գրանցվելու չեն կարող պաշտոնավարել:

67. Նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնին նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետը:

68. Նշված եռամսյա ժամկետում վարկային կազմակերպության կողմից նշանակված որակավորման վկայական չունեցող վարկային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պետք է սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկում անցնի որակավորման և մասնագիտական համապատասխանության քննություն և գրանցվի Կենտրոնական բանկում, իսկ որակավորման վկայական ունեցողը՝ գրանցվի Կենտրոնական բանկում:

69. Վարկային կազմակերպության խորհրդի քանակական կազմը վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով նախատեսված թվից պակաս լինելու դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում թափուր մնացած տեղերի համար խորհրդի անդամի նոր թեկնածուներին՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով: Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների թեկնածուներն իրավունք ունեն իրականացնել համապատասխանաբար խորհրդի նախագահի և խորհրդի անդամի պարտականությունները միայն Կենտրոնական բանկում համապատասխան պաշտոնում գրանցման պահից: Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և խորհրդի անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:»:

8) Կանոնակարգ 13-ի 76.6 կետի 6-րդ ենթակետում «50-րդ կետով» բառերը փոխարինել «50-րդ և 50.1 կետերով» բառերով:

9) Կանոնակարգ 13-ի Հավելված 2-ում.

ա. 1-ին կետի 1.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ.

- o բանկ
- o օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- o վարկային կազմակերպություն
- o ապահովագրական ընկերություն
- o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ
- o ապահովագրական բրոքեր
- o ներդրումային ընկերություն
- o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ
- o կարգավորվող շուկայի օպերատոր
- o Կենտրոնական դեպոզիտարիա
- o ֆոնդի կառավարիչ
- o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ
- o բյուրո
- o վճարահաշվարկային կազմակերպություն
- o դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն»,

բ. 2-րդ կետի 2.6 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում են նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)»,

գ. 2-րդ կետի 2.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.7. Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը) (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)ե,

դ. 3-րդ կետի 3.2 ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

ե. 3-րդ կետը լրացնել 3.5 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.5. Նշեք նշված պաշտոնում Ձեր պաշտոնավարման սկիզբը, ըստ իրավասու կառավարման մարմնի որոշման.

(օր/ամիս/տարի)»,

զ. 4-րդ կետի 4.3 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից).

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը

»,

է. 4-րդ կետի 4.4 ենթակետը «վերջին աշխատատեղից» բառերից հետո լրացնել «(ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք)» բառերով,

ը. 5-րդ կետի 5.7 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ»,

թ. 5-րդ կետի 5.9 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ:»,

ժ. 6-րդ կետի 6.3 ենթակետում «Սույն կանոնակարգի իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները» բառերը փոխարինել «Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:» բառերով,

ժա.8-րդ կետի 8.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

»,

ժբ. 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

ժգ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Հավաստիացնում եմ, որ.

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը,

գ. վերոնշված անձը համապատասխանում է համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին.

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրություն

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից
լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն _____»:

10) Կանոնակարգ 13-ը լրացնել Հավելված 3ա-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):
11) Կանոնակարգ 13-ը լրացնել Հավելված 4բ-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):
12) Կանոնակարգ 13-ի Հավելված 21-ը շարադրել նոր խմբագրությամբ՝համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է):
13) Կանոնակարգ 13-ը լրացնել Հավելված 24-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2012 թ., N 377-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 377-Ն որոշմամբ

Հավելված 3ա
«Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի

Ղեկավարների գրանցման ընթացակարգը

Թիվ	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգը
1. Հարկային կազմակերպության ղեկավար, այդ թվում՝		
1	Խորհրդի նախագահ	Բ
2	Խորհրդի անդամներ	Բ
3	Խորհրդի նախագահի տեղակալ	Բ
4	Գործադիր տնօրեն	Բ
5	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
6	Տնօրինության (վարչության) նախագահ	Բ
7	Տնօրինության (վարչության) նախագահի տեղակալ	Բ
8	Տնօրինության (վարչության) անդամ	Բ
9	Գլխավոր հաշվապահ	Բ
10	Գլխավոր հաշվապահի տեղակալ	Բ
11	Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ	Բ
12	Վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ	Պ
13	Վերստուգիչ հանձնաժողովի անդամ	Պ

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 377-Ն որոշմամբ

Հավելված 4բ
«Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկ

1. Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank)
2. Միջազգային հաշվարկների բանկ (Bank of International Settlements)
3. Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Black Sea Trade and Development Bank)
4. Կարիբյան զարգացման բանկ (Caribbean Development Bank)
5. Կենտրոնական Ամերիկայի տնտեսական ինտեգրման բանկ (Central American Bank of Economic Integration)
6. Լատինական Ամերիկայի զարգացման բանկ (Corporation Andina de Fomento)
7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (European Bank for Reconstruction and Development)
8. Եվրոպական հանձնաժողով (European Commission)
9. Եվրոպական ներդրումային բանկ (European Investment Bank)
10. Ներամերիկյան զարգացման բանկ (Inter-American Development Bank)
11. Միջազգային արժութային հիմնադրամ (International Monetary Fund)
12. Իսլամական զարգացման բանկ (Islamic Development Bank)
13. Սկանդինավյան զարգացման հիմնադրամ (Nordic Development Fund)
14. Սկանդինավյան ներդրումային բանկ (Nordic Investment Bank)
15. Նավթ արտահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ (OPEC Fund for International Development)
16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Co-operation and Development)
17. Նավթանյութեր արտահանող երկրների կազմակերպություն (Organization of Petroleum-Exporting Countries)
18. Համաշխարհային բանկի խումբ (World Bank Group)
    1) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (International Bank for Reconstruction and Development)
    2) Միջազգային զարգացման ասոցիացիա (International Development Association)
    3) Միջազգային ֆինանսական կորպորացիա (International Finance Corporation)
    4) Բազմազգ ներդրումների երաշխավորման գործակալություն (Multinational Investment Guarantee Agency)
    5) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (International Centre for Settlement of Investment Disputes)
19. Վերակառուցման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau (KfW))
20. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների ֆինանսական կազմակերպություններ

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 377-Ն որոշմամբ

Հավելված 21
«Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի

Վարկային կազմակերպության կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/ _____թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է

_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)
_____ __/__/_____ թիվ __
(իրավասու մարմնի անվանումը)

որոշմամբ

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 377-Ն որոշմամբ

Հավելված 24
«Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի

Միջնորդագիր
Ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ

Խնդրում ենք սույն միջնորդագրում նշված անձին գրանցել որպես ղեկավար և կից ներկայացնում ենք նրա վերաբերյալ տեղեկությունները:

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
☐ *Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները*
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ներկայացուցչության ղեկավար Դուք պետք է հանդիսանաք:*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ o բանկ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o ներդրումային ընկերություն o վճարահաշվարկային կազմակերպություն o դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություն
2. Անձնական տվյալներ
2.4. Անուն, ազգանուն, հայրանուն
2.2. Սեռ՝ o արական o իգական
2.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
2.4. Ծննդավայր
2.5. Քաղաքացիություն
2.6. Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի և գործող այլ անձնագրի համարը և սերիան)
2.7. Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարանիշը), (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
2.8. Բնակության վայրը (մշտական և տվյալ պահին)
2.9. Հեռախոսահամար

2.10. էլեկտրոնային փոստի հասցե

2.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը,

Անուն, ազգանուն, հայրանուն

Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

3. Ղեկավար պաշտոն

3.1. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար.

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Սովորելու ժամանակաշրջանը (--թ-ից մինչև --թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակեր-պության անվանում	Գտնվելու վայր	Հեռախո-սահամար	Պաշտոնը, հիմնական պարտակա-նությունները	Ազատման հիմքերը

Նշել միջանկյալ չաշխատած ժամանակահատվածներում ինչով եք զբաղվել

Չաշխատած ժամանակահատված	Նկարագրություն

5. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից
լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն _____

*«2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2013 թվականի մարտի 4-ից շրջանառության մեջ դնել 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունը, որը էսքիզների հետ միասին ներկայացված է Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
29 հունվարի 2013 թ., N 13-Ն

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հունվարի 22-ի թիվ 13-Ն որոշմամբ

Նկարագրություն

1. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2013»: Աջ կողմում տեղադրված են «1/4 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,18 +/- 0,07 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.02.2013 թ. (ՀՀԳՏ N7 (451), 1.03.2013):

1.1. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





2. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2013»: Աջ կողմում տեղադրված են «1/2 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,66 +/- 0,15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

2.1. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





3. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2013»: Աջ կողմում տեղադրված են «1 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38,60 +/- 0,3 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 8.000.000 հատ

3.1. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





4. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2013»: Աջ կողմում տեղադրված են «5 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	60,15 +/- 0,5
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

4.1. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





5. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «5000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2013»: Աջ կողմում տեղադրված են «10 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	10 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	75,50 +/- 0,7
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

5.1. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





6. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2013»: Աջ կողմում տեղադրված են «1 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK»մակագրություններն են:

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	100,00 +/- 0,9
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6.1. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





7. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

Դրամի դիմերեսին պատկերված են ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «20000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2013»: Աջ կողմում տեղադրված են «5 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	20 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	149,62 +/- 1,2
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 50.000 հատ

7.1. 2013 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





«Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ը հաստատելու մասին[*]

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, որպես կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների ռեեստրը վարողի վերահսկող մարմին, ինչպես ընթացիկ ֆինանսական վերահսկողության, այնպես էլ հանրային իրազեկման նպատակով պարտավոր է պատշաճ պարբերականությամբ և մանրամասնությամբ վերլուծել և հրապարակել ընդհանրացրած և արժանահավատ տեղեկատվություն պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասին,

Նպատակ ունենալով բացահայտել կենսաթոշակային ֆոնդերում պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակցությունը, ինչպես նաև հրապարակել վերլուծություններ կուտակային կենսաթոշակային համակարգի նշանակալի զարգացումների մասին և դրանով իսկ ապահովել կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների և հանրության վստահությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի թափանցիկության նկատմամբ և

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
29 հունվարի 2013 թ., N 16-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հունվարի 22-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.02.2013 թ. (ՀՀՊՏ N7 (451), 1.03.2013):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/08

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց կազմը, բովանդակությունը, ներկայացման կարգը և պարբերականությունը:

2. Սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում գումարներն արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ մեկ դրամի ճշտությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***ամսաթիվ***՝ ամսաթիվը, ամիսն ու տարեթիվը,
2) ***հաշվետու տարի***՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Մասնակիցների ռեեստրը վարողի համար առաջին հաշվետու տարի է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն մասնակիցների ռեեստրը վարելու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:
3) ***հաշվետու ամիս***՝ օրացուցային տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Մասնակիցների ռեեստրը վարողի համար առաջին հաշվետու ամիս է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն մասնակիցների ռեեստրը վարելու օրվանից մինչև տվյալ ամսվա ավարտն ընկած ժամանակաշրջանը,
4) ***հաշվետու ժամանակաշրջան***՝ հաշվետու ամիս կամ հաշվետու տարի,
5) ***հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ***՝ հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվա ժամը 00:00,
6) ***հաշվետու ժամանակաշրջանի վերջ***՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ժամը 24:00,
7) ***ֆոնդի ընտրության դիմում***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին» թիվ 171-Ն որոշման (այսուհետ՝ Կանոնակարգ 10/07) հավելված 1-ով սահմանված դիմում.
8) ***փայերի փոխանակման դիմում***՝ Կանոնակարգ 10/07-ի հավելված 3-ով սահմանված դիմում:

4. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» (այսուհետ՝ Օրենք) և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ՈՉ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ՝ԻՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՌԵԺԻՄՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից գործարկվող տեղեկատվական համակարգը Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու համապատասխան աշխատա-

կիցներին պետք է հնարավորություն ընձեռի իրական ժամանակի ռեժիմում մոնիթորինգի ենթարկել փայերի թողարկման և փայերի մարման գործարքների վերաբերյալ տվյալները այդ աշխատակիցների համակարգչի միջոցով՝ հնարավորություն ընձեռելով ներբեռնել մասնակիցների ռեեստրը վարողից ստացված հաշվետվությունը:

6. Փայերի թողարկման գործարքների վերաբերյալ հաշվետվության մեջ ներառվող տվյալները պարունակում են հետևյալ պարտադիր դաշտերը.

1) Ֆոնդի ծածկագիրը,
2) Տեղաբաշխման գինը,
3) Թողարկման վճարը,
4) Փայի հաշվարկային արժեքը,
5) Թողարկված փայերի քանակը,
6) Գործարքի ընդհանուր գումարը,
7) Փայերի թողարկման հիմքերի ցանկը, որը բաղկացած է «դիմումով ֆոնդի ընտրություն», «ծրագրային մոդուլով ֆոնդի ընտրություն», «փայերի փոխանակում», «երաշխավորված գումարի փոխհատուցում», «կառավարչի փոխհատուցում», «պահառուի փոխհատուցում» և «կառավարչի կուտակային վճար» տարբերակներից,
8) Կուտակային վճարի չափը,
9) Կուտակային վճարի ստացման ամսաթիվը,
10) Կուտակային վճարի ստացման ժամը,
11) Դիմումը ստանալու ամսաթիվը,
12) Դիմումը ստանալու ժամը,
13) Փայերի թողարկման ամսաթիվը,
14) Փայերի թողարկման ժամը,
15) Գործարքի նույնականացուցիչ ծածկագիրը,
16) Կենսաթոշակային հաշվի համարը,

7. Փայերի մարման գործարքների վերաբերյալ հաշվետվության մեջ ներառվող տվյալները պարունակում են հետևյալ պարտադիր դաշտերը.

1) Ֆոնդի ծածկագիրը,
2) Հետգնման (մարման) գինը,
3) Մարման վճարը,
4) Փայի հաշվարկային արժեքը,
5) Մարված փայերի քանակը,
6) Գործարքի ընդհանուր գումարը,
7) Փայերի մարման հիմքերի ցանկը, որը բաղկացած է «փայերի փոխանակում», «ապահովագրական ընկերությանը փոխանցում», «ծրագրային վճարներ», «կենսաթոշակային տարիքում միանվագ վճար», «հաշմանդամության դեպքում միանվագ վճար», «վատառողջության դեպքում միանվագ վճար», ,միանվագ վճար ժառանգներին», «միջոցների փոխանցում հայրենիք վերադարձող օտարերկրացիներին», «միջոցների փոխանցում քաղաքացիությունից հրաժարվողներին» տարբերակներից,
8) Դիմումի ստացման ամսաթիվը,
9) Դիմումի ստացման ժամը,
10) Փայերի մարման ամսաթիվը,
11) Փայերի մարման ժամը,
12) Գործարքի նույնականացուցիչ ծածկագիրը,
13) Կենսաթոշակային հաշվի համարը:

8. Սույն կանոնակարգի 5-րդ կետում նշված հաշվետվությունը պետք է հնարավորություն տա զտել պարունակվող տեղեկատվությունը՝ ըստ սույն կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերում նշված առանձին դաշտերի:

ԳԼՈՒԽ 4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից գործարկվող տեղեկատվական համակարգը Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու համապատասխան աշխատակիցներին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված կապի միջոցով հաշվետվության տեսքով տեղե-

կացնում է հետևյալ դեպքերի մասին՝ դրանք ի հայտ գալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, ներառելով կառավարչի և ֆոնդի, ինչպես նաև համապատասխան դեպքի նկարագրությունը.

1) Օրական կտրվածքով հաշվարկելիս տվյալ օրվա համար կառավարչի՝ իր կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդում Օրենքով սահմանված տոկոսային մասնակցության փաստացի մեծությունը տվյալ օրվա համար նվազել է պահանջվող նվազագույն չափի 120 տոկոսից (միայն եթե կառավարչի մասնակցությունը կառավարվող յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդում չի գերազանցում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված չափը): Այս դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը տեղեկացնում է ամեն անգամ նվազագույն տոկոսային մասնակցության 120 տոկոսից նվազելու դեպքում: Եթե առաջին անգամ տոկոսային մասնակցության 120 տոկոսից նվազելու հիմքով Կենտրոնական բանկին հաշվետվություն ուղարկելուց անմիջապես հետո տոկոսային մասնակցության փաստացի մեծությունը պահպանվում է ցածր իր նվազագույն չափի 120 տոկոսից, սակայն հավասար կամ մեծ նվազագույն չափից, ապա տվյալ ժամանակաշրջանի համար Կենտրոնական բանկը չի տեղեկացվում: Սակայն, եթե տոկոսային մասնակցության չափը նորից բարձրանում է իր նվազագույն չափի 120 տոկոսից և կրկին իջնում այդ չափից, ապա Կենտրոնական բանկին այդ մասին ուղարկվում է հաշվետվություն:

2) Օրական կտրվածքով հաշվարկելիս տվյալ օրվա համար կառավարչի՝ իր կողմից կառավարվող յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդում Օրենքով սահմանված տոկոսային մասնակցության չափի փաստացի մեծությունը փոքր է նվազագույն չափից (միայն եթե կառավարչի մասնակցությունը ֆոնդում չի գերազանցում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված չափը):

ԲԱԺԻՆ 3. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 5. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Մասնակիցների ռեեստրը վարողը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ պարբերական հաշվետվությունները՝ նշված հաճախականությամբ.

Հաշվետվության թիվը	Հաշվետվության անվանումը	Ներկայացման պարբերականությունը
1	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության և դրանցում ձեռքբերված փայերի վերաբերյալ	ամսական
2	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի ձեռքբերման և մարման վերաբերյալ	ամսական
3	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայատերերի փայերի համախառն արժեքի բաշխման վերաբերյալ	տարեկան
4	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերից կատարված վճարումների վերաբերյալ	տարեկան
5	Նոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, փայերի փոխանակման վերաբերյալ	տարեկան
6	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդում կառավարչի մասնակցության վերաբերյալ	ամսական

ԳԼՈՒԽ 6. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ


11. Սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում ՍիԲիէյ-նեթ միջբանկային համակարգչային ցանցի (այսուհետև՝ ՍիԲիէյ-նեթ) միջոցով՝ Կենտրոնական բանկի կողմից ստեղծված և մասնակիցների ռեեստրը վարողին ուղարկված պաշտպանված օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան, որոնց ձևերը սահմանված են սույն կանոնակարգի Հավելվածներ 1-6-ով:

12. ՍիԲիէյ-նեթին միացված չլինելու դեպքում հաշվետվության էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական բանկ է ներկայացվում ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով:

13. Սույն կանոնակարգի 11-րդ և 12-րդ կետերում նշված համակարգերի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային այլ կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

14. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն:

15. Հաշվետվության անվանման կոդն ունի հետևյալ կառուցվածքը.



ընդ որում, «Հաշվետվության համարը» սյունակում լրացվում է սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված «Հաշվետվության թիվը» սյունակում նշված համարը (Թիվ 1 հաշվետվության լրացման դեպքում սույն սյունակում լրացվում է 01, Թիվ 2-ի դեպքում՝ 02 և այլն): Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:

16. Հաշվետվությունների ֆայլերը պետք է պարունակեն թվային հավաստագիր (բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվությունները ներկայացվում են ՍիԲիէյ-նեթով):

17. Ամսական հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը ներառյալ:

18. Տարեկան հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 15-ը ներառյալ:

19. Ամսական և տարեկան հաշվետվություններում «Ամսաթիվը _____թ-ից մինչև _____ թ.» դաշտում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի առաջին և վերջին օրվա ամսաթվերը՝ ամսաթիվը՝ թվերով, ամիսը՝ թվերով, տարին՝ թվերով (օրինակ՝ 31/04/2014): Ընդ որում՝ հաշվետվությունները կազմելիս մեկ տարին պետք է հասկանալ 365 կամ 366 օր, այսինքն՝ օրացուցային օրերի քանակը:

20. Ամսական և տարեկան հաշվետվություններում «Ամսաթիվը՝__/__/_____» դաշտում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը՝ թվերով, ամիսը՝ թվերով, տարին՝ թվերով (օրինակ՝ 31/04/2014):

21. Եթե հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

22. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն կանոնակարգի 11-րդ կետի համաձայն, ընդ որում, մի քանի ճշգրտված տարբերակների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին տարբերակը:

23. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, այն չպետք է լրացվի «յունիկոդով», երկու լրացված ամբողջական տողերի (ոչ յուրաքանչյուր սյունակի երկու լրացված տողերի) միջև դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերություններից: Սույն կետի պահանջը չի տարածվում մասնակիցների ռեեստրը վարողի վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում:

24. Հաշվետվությունները լրացվում են միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան):

25. Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում պարունակվող տեղեկությունները պետք է լինեն արժանահավատ և ամբողջական:

26. Մասնակիցների ռեեստրը վարողը իր տեղեկատվական համակարգում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի անվանումների, թողարկման և մարման վճարների տոկոսային մեծությունների և այլ տեղեկատվություն մուտքագրելու կամ մուտքագրված տեղեկատվության մեջ փոփոխություններ կատարելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը ուղարկում է էլեկտրոնային հաղորդագրություն սույն կանոնակարգի 11-րդ և (կամ) 12-րդ կետերով սահմանված կարգով, որով ծանուցում է կատարված տեղեկատվության մուտքագրման և (կամ) փոփոխման ամսաթվի և ժամի մասին, ինչպես նաև կցում մուտքագրված և (կամ) փոփոխված տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 7. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՉԵՌՔԲԵՐՎԱԾ ՓԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 1 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

27. Թիվ 1 հաշվետվությունում (ամսական) լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող ամսվա ընթացքում ֆոնդերի մասնակիցների կուտակային վճարների և նրանց պատկանող փայերի վերաբերյալ տեղեկությունները:

28. Թիվ 1 հաշվետվության 3-րդ աղյուսակի «Ֆոնդերի ծածկագրերը» տողի 1-6-րդ սյուներում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը:

29. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Փայերի չվերածված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ»*** տողի «գումարը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից ստացված կուտակային վճարների գումարը (հազար դրամներով), որոնցով փայեր չեն թողարկվել մինչ հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը,
2) ***«Փայերի վերածված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում»*** տողի «գումարը» սյունակում լրացվում է կուտակային վճարների գումարը (հազար դրամներով), որոնցով մասնակիցների ռեեստրը վարողը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկել է փայեր,
3) ***«Փայերի չվերածված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ»*** տողի «գումարը» սյունակում լրացվում է կուտակային վճարների մեծությունը (հազար դրամներով), որոնք մասնակիցների ռեեստրը վարողը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացել է և որոնցով մինչ հաշվետու ժամանակաշրջանի վերջը փայեր չի թողարկել:

30. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«ֆոնդի ընտրության դիմումի ներկայացմամբ»*** տողի «թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կենսաթոշակային հաշիվների տերերի ընդհանուր թիվը, որոնց համար կենսաթոշակային հաշիվը բացվել է մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացված ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա,
2) ***«Հարկային մարմնից ստացված տեղեկատվությամբ»*** տողի «թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կենսաթոշակային հաշիվների տերերի ընդհանուր թիվը, որոնց համար կենսաթոշակային հաշիվը բացվել է, Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված, մասնակիցների ռեեստրը վարողին հարկային մարմնից ուղարկված տեղեկատվության հիման վրա,
3) ***«Ժառանգության տնօրինմամբ»*** տողի «թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կենսաթոշակային հաշիվների տերերի ընդհանուր թիվը, որոնք չեն հանդիսացել պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից, և որոնց համար մասնակիցների ռեեստր վարողը բացել է կենսաթոշակային հաշիվ և ժառանգված փայերը փոխանցել այդ կենսաթոշակային հաշվին՝ համաձայն Օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի,
4) ***«Փայեր չունեցող»*** տողի «թիվը» սյունակում լրացվում է այն կենսաթոշակային հաշիվների տերերի ընդհանուր թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որոնց կենսաթոշակային հաշվում փայեր չկան: Սույն տողը ներկայացնում է մասնակիցների ռեեստրը վարողի մոտ վարվող՝ 0-ական հաշվեկշիռ ունեցող բոլոր կենսաթոշակային հաշիվների տերերի թիվը,
5) ***«Փայեր ունեցող»*** տողի «թիվը» սյունակում լրացվում է ֆոնդերի բոլոր փայատերերի ընդհանուր թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (բացառությամբ այն մահացած մասնակիցների, որոնց կենսաթոշակային հաշվում առկա են փայեր և մասնակիցների ռեեստրը վարողը վարում է կենսաթոշակային հաշիվները, մինչև օրենքով սահմանված ժամկետում ժառանգությունը ստանալը կամ ժառանգության ժամկետի ավարտը),
6) ***«Մահացած կենսաթոշակային հաշիվների տերերը»*** տողի «թիվը» սյունակում լրացվում է մահացած կենսաթոշակային հաշիվների տերերի թիվը, որոնց կենսաթոշակային հաշվում առկա են փայեր և մասնակիցների ռեեստրը վարողը վարում է նրանց կենսաթոշակային հաշիվները մինչև օրենքով սահմանված ժամկետում ժառանգությունը ստանալը կամ ժառանգության ժամկետի ավարտը.
7) ***«Ընդամենը»*** տողի «թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կենսաթոշակային հաշիվների տերերի ընդհանուր թիվը:

31. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 3-ի «Փայատերերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ ծննդյան տարեթվի և սեռի» սյունակի 1.1-1.25-րդ տողերի համապատասխանաբար «անձանց թիվը» և «փայերի քանակը» ենթասյուներում համապատասխանաբար լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ համապատասխան տարիներին ծնված և սեռերի փայատերերի (ներառյալ այն անձանց, ովքեր դարձել են փայատեր ժառանգության տնօրինման արդյունքում) և նրանց փայերի քանակների բաշխումը՝ ըստ Աղյուսակ 3-ի 1-6-րդ սյուներում նշված ֆոնդերի: Սույն կետում նշված սյունակի «Ընդամենը» տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ բոլոր տարիներին ծնված և սեռերի մասնակիցների փայատերերի և նրանց փայերի քանակների բաշխումը՝ ըստ 1 - 6-րդ սյուներում նշված ֆոնդերի:

ԳԼՈՒԽ 6. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՉԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 2 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Թիվ 2 հաշվետվությունում (ամսական) լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող հաշվետու ամսվա ընթացքում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի թողարկման և մարման վերաբերյալ տեղեկությունները:

33. Թիվ 2 հաշվետվության 1-ին, 2-րդ և 3-րդ աղյուսակների «Ֆոնդերի ծածկագրերը» տողի 1-6-րդ սյուներում լրացվում են բոլոր այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնց փայերը թողարկվել կամ մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

34. Թիվ 2 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Թողարկված փայերի հաշվարկային արժեք»*** տողի 1-6-րդ սյուներում լրացվում է համապատասխան սյուներում նշված ֆոնդերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկված փայերի գումարը (հազար դրամներով)՝ թողարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքներով,
2) ***«Թողարկման վճար»*** տողի 1-6-րդ սյուներում լրացվում է համապատասխան ֆոնդերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկված փայերի՝ թողարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ հաշվարկված թողարկման վճարների գումարը (հազար դրամներով),
3) ***«Մարված փայերի հաշվարկային արժեք»*** տողի 1-6-րդ սյուներում լրացվում է համապատասխան սյուներում նշված ֆոնդերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մարված փայերի գումարը (հազար դրամներով)՝ մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքներով,
4) **«Մարման վճար»** տողի 1-6-րդ սյուներում լրացվում է համապատասխան ֆոնդերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մարված փայերի՝ մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ հաշվարկված մարման վճարների գումարը (հազար դրամներով):

35. Թիվ 2 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Կուտակային վճարներով»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են համապատասխանաբար թողարկման գործարքների և թողարկված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյուներում նշված ֆոնդերի, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկվել են մասնակիցների ռեեստրը վարողին ուղարկած կուտակային վճարներով՝ ֆոնդի ընտրության դիմումի կամ ծրագրային մոդուլի միջոցով ֆոնդի ընտրությամբ,
2) ***«Ծրագրային մոդուլով»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյուներում լրացվում են համապատասխանաբար թողարկման գործարքների և թողարկված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյուներում նշված ֆոնդերի, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկվել են ծրագրային մոդուլի միջոցով ֆոնդի ընտրությամբ,
3) ***«Ֆոնդի ընտրության դիմումով»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյուներում լրացվում են համապատասխանաբար թողարկման գործարքների և թողարկված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյուներում նշված ֆոնդերի, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկվել են մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացված ֆոնդի ընտրության դիմումի միջոցով ֆոնդի ընտրությամբ,
4) ***«Փայերի փոխանակման դիմումով»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյուներում լրացվում են համապատասխանաբար թողարկման գործարքների և թողարկված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյուներում նշված ֆոնդերի, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկվել են մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացված փայերի փոխանակման դիմումի միջոցով,

5) ***«Երաշխիքային ֆոնդից հատուցմամբ»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են համապատասխանաբար թողարկման գործարքների թիվը և թողարկված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյունակներում նշված ֆոնդերի, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկվել են մասնակիցների համար ստացված երաշխիքային հատուցումներից՝ համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի,

6) ***«Կառավարչի փոխհատուցմամբ»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են համապատասխանաբար թողարկման գործարքների թիվը և թողարկված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյունակներում նշված ֆոնդերի, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկվել են մասնակիցների ռեեստրը վարողի կողմից կառավարչից ստացված փոխհատուցմամբ,

7) ***«Պահառուի փոխհատուցմամբ»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են համապատասխանաբար թողարկման գործարքների թիվը և թողարկված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյունակներում նշված ֆոնդերի, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկվել են մասնակիցների ռեեստրը վարողի կողմից կենսաթոշակային ֆոնդի պահառուից ստացված փոխհատուցմամբ,

8) ***«Ժառանգության տնօրինմամբ»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են համապատասխան գործարքների թիվը և ձեռքբերված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյունակներում նշված ֆոնդերի, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռք են բերվել ժառանգության արդյունքում: Սույն տողում ներառվում են նաև այն դեպքերը, երբ փայերը ձեռք են բերվել այն անձանց կողմից, որոնք չեն հանդիսացել պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցներ, և որոնց համար մասնակիցների ռեեստրը վարողը բացել է կենսաթոշակային հաշիվներ և փոխանցել է կենսաթոշակային ֆոնդի փայերը այդ կենսաթոշակային հաշիվներին,

9) ***«Ընդամենը»*** տողի 1-6-րդ սյունակների «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փայերի ձեռքբերման գործարքների և ձեռքբերված փայերի ընդհանուր թվերը՝ բաշխված ըստ համապատասխան ֆոնդերի:

36. Թիվ 2 հաշվետվության Աղյուսակ 3-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Փայերի փոխանակմամբ»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փայերի փոխանակման հիմքով մարման գործարքների թիվը և մարված փայերի քանակը,

2) ***«Անուիտետի պայմանագրով»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում անուիտետի պայմանագրի հիմքով մարման գործարքների թիվը և մարված փայերի քանակը,

3) ***«Ծրագրային վճարով»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ծրագրային վճարներ ստանալու հիմքով մարման գործարքների թիվը և մարված փայերի քանակը,

4) ***«Միանվագ վճարով»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միանվագ վճարների կատարման արդյունքում մարման գործարքների թիվը և մարված փայերի քանակը, ընդ որում՝ բաշխելով դրանք հերթականությամբ՝ ըստ Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով, 60.1 հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև 61-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերի.

5) ***«Ընդամենը»*** տողի «գործարքների թիվը» և «փայերի քանակը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բոլոր մարման գործարքների թիվը և մարված փայերի քանակը՝ բաշխված ըստ 1-6 սյունակներում նշված ֆոնդերի:

ԳԼՈՒԽ 9. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ՓԱՅԵՐԻ ՀԱՄԱԽՄԱՆ ԱՐԺԵՔԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 3 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

37. Թիվ 3 հաշվետվությունում (տարեկան) ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փայատերերի փայերի համախառն հաշվարկային արժեքի գումարի բաշխման, ինչպես նաև տարբեր ֆոնդերի փայեր ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները:

38. Թիվ 3 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Փայերի հաշվարկային արժեքների գումարը»*** սյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ 1.1-1.25-րդ տողերում նշված համապատասխան

տարիներին ծնված և սեռերի մասնակիցների (այդ թվում՝ այն մահացած մասնակիցների, որոնց համար մասնակիցների ռեեստրը վարողը շարունակում է վարել կենսաթոշակային հաշիվները օրենքով սահմանված ժամկետում) փայերի հաշվարկային արժեքների գումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքներով, հազար դրամներով,

2) ***«Անձանց թիվը՝ ըստ ձեռք բերված փայերի հաշվարկային արժեքների համախառն մեծության»*** սյունակի 3-12-րդ ենթասյունակների 1.1-1.25-րդ տողերում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնք հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ունեցել են սույն սյունակի ենթասյունակներում նշված մեծությունների միջակայքում ընկած համախառն հաշվարկային արժեքներով փայեր՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքներով,

3) ***«Ընդամենը»*** տողի «Փայերի հաշվարկային արժեքների գումարը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ բոլոր տարիներին ծնված և սեռերի մասնակիցների (այդ թվում՝ այն մահացած մասնակիցների, որոնց համար մասնակիցների ռեեստրը վարողը Օրենքով սահմանված ժամկետում շարունակում է վարել կենսաթոշակային հաշիվները) համար թողարկված փայերի հաշվարկային արժեքների գումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքներով, հազար դրամներով: Սույն տողի 3-12-րդ ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ բոլոր տարիներին ծնված և սեռերի մասնակիցների թիվը, ովքեր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ձեռք են բերել «անձանց թիվը՝ ըստ ձեռքբերված փայերի հաշվարկային արժեքների համախառն մեծության» սյունակի ենթասյունակներում նշված մեծությունների միջակայքում ընկած համախառն հաշվարկային արժեքներով փայեր՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքներով:

39. Թիվ 3 հաշվետվության Աղյուսակ 2-ի «Փայատերերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ փայատերերի ծննդյան տարեթվի և սեռի» սյունակի 1.1-1.25-րդ տողերի 1-6-րդ սյունակներում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ համապատասխան ծննդյան տարեթվի և սեռի մասնակիցների թիվը (այդ թվում՝ այն մահացած մասնակիցների, որոնց համար մասնակիցների ռեեստրը վարողը շարունակում է վարել կենսաթոշակային հաշիվները Օրենքով սահմանված ժամկետում), ովքեր ունեն մեկ կամ միաժամանակ մի-քանի կենսաթոշակային ֆոնդերի փայեր, ինչպես նշված է 1-6 սյունակներում: Սույն աղյուսակի «Ընդամենը» տողի 1-6-րդ սյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ բոլոր տարիներին ծնված և սեռերի մասնակիցների թիվը, ովքեր ունեն 1-6-րդ սյունակներում նշված համապատասխան քանակի ֆոնդի փայեր:

ԳԼՈՒԽ 10. ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 4 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

40. Թիվ 4 հաշվետվությունում (տարեկան) լրացվում են հաշվետվության ներկայացման տարվան նախորդող տարվա ընթացքում պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերից կատարված վճարումների վերաբերյալ տեղեկությունները:

41. Թիվ 4 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ ծննդյան տարեթվի և սեռի»*** սյունակի 1.1-1.25-րդ տողերը ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերից վճարումներ ստացած մասնակիցների (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում) բաշխումը՝ ըստ նրանց ծննդյան տարեթվի և սեռի.

2) ***«Գումարը»*** սյունակի 1.1-ից 1.25-րդ տողերում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապատասխան ծննդյան տարեթվի և սեռի մասնակիցներին (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում) կենսաթոշակային ֆոնդերից կատարված վճարումների համախառն մեծությունը (հազար դրամներով),

3) ***«Անձանց թիվը»*** սյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապատասխան ծննդյան տարեթվի և սեռի այն մասնակիցների (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում) ընդհանուր թիվը, ում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարվել են վճարումներ,

4) ***«Վճարված գումարների մեծությունը»*** սյունակի 4-16-րդ ենթասյունակներում 1.1-1.25-րդ տողերից յուրաքանչյուրի համար լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պարտադիր

կենսաթոշակային ֆոնդերից համապատասխան մեծության վճարումներ ստացած մասնակիցների թիվը (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում),

5) ***«Ընդամենը»*** տողի «Գումարը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բոլոր տարիքի և սեռի մասնակիցներին (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում) կենսաթոշակային ֆոնդերից կատարված վճարումների մեծությունը (հազար դրամներով): Սույն տողի «անձանց թիվը» սյունակում լրացվում է բոլոր տարիքի և սեռի մասնակիցների թիվը (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում), որոնց հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարվել են կենսաթոշակային ֆոնդերից վճարումներ: Սույն տողի 4-16-րդ ենթասյուներում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բոլոր տարիքի և սեռի մասնակիցների թիվը, ում վճարվել են ,Վճարված գումարների մեծությունը» սյունակի համապատասխան միջակայքերում նշված մեծությամբ գումարներ:

42. Թիվ 4 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ ծննդյան տարեթվի և սեռի»*** սյունակի 1.1-1.25-րդ տողերը ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կենսաթոշակային ֆոնդերից վճարումներ ստացած մասնակիցների (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում) բաշխումը՝ ըստ նրանց ծննդյան տարեթվի և սեռի,

2) ***«Աուդիտետ»*** սյունակի համապատասխանաբար «անձանց թիվը» և «գումարը» ենթասյունակների 1.1-1.25-րդ տողերում լրացվում են համապատասխան տարիքի և սեռի այն մասնակիցների (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում) թիվը և վճարված գումարի չափը (հազար դրամներով), ում համար հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողը փայերը մարել է և ստացված դրամական միջոցները փոխանցել մասնակցի ընտրած ապահովագրական ընկերությանը,

3) ***«ծրագրային վճար»*** սյունակի համապատասխանաբար «անձանց թիվը» և «գումարը» ենթասյունակների 1.1-1.25-րդ տողերում լրացվում են համապատասխան տարիքի և սեռի այն մասնակիցների (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում) թիվը և վճարված գումարի չափը (հազար դրամներով), ում համար հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողը վճարումներ է կատարել ծրագրային վճարների տեսքով,

4) ***«միանվագ վճար»*** սյունակի համապատասխանաբար «անձանց թիվը» և «գումարը» ենթասյունակների 1.1-1.25-րդ տողերում լրացվում են համապատասխան տարիքի և սեռի այն մասնակիցների (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում) թիվը և վճարված գումարի չափը (հազար դրամներով), ում համար հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային ֆոնդերից վճարումներ է կատարել միանվագ վճարների տեսքով, ընդ որում՝ 6-17-րդ սյունակներում բաշխելով դրանք հերթականությամբ՝ Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով, 60.1 հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև 61-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերի,

5) ***«Մնացորդը»*** սյունակի «Անձանց թիվը» ենթասյունակում լրացվում է 1.1-1.25-րդ տողերում նշված համապատասխան ծննդյան տարեթվի և սեռի մասնակիցների թիվը (այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռքբերելու արդյունքում), ում կենսաթոշակային հաշիվներում առկա են եղել մնացորդային փայեր հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ: Սույն սյունակի «գումարը» ենթասյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում է հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկված՝ համապատասխան ծննդյան տարեթվի և սեռի մասնակիցների կենսաթոշակային հաշիվներում առկա փայերի հաշվարկային արժեքների մեծությունը (հազար դրամներով):

6) ***«Ընդամենը»*** տողի 2-19-րդ սյունակներում լրացվում են 1.1-1.25-րդ տողերում նշված բոլոր տարիքների և սեռի անձանց համար համապատասխանաբար 2-19-րդ սյունակներում լրացված մեծությունների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 11. ՆՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

43. Թիվ 5 հաշվետվությունում (տարեկան) ներկայացվում են հաշվետվության ներկայացման տարվան նախորդող հաշվետու տարվա ընթացքում նոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերին հետագա

կուտակային վճարներն ուղղելու, ինչպես նաև ֆոնդերի փայերի փոխանակման գործարքների (ներառյալ՝ փայերի այն առաջին փոխանակման գործարքների, որոնք կատարվել են մասնակցի համար ծրագրային մոդուլով ընտրված ֆոնդի փայերը փոխանակելու համար) վերաբերյալ տեղեկությունները:

44. Թիվ 5 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Ֆոնդը, որին սկսել են կատարել կուտակային վճարներ»*** սյունակի 2-7-րդ տողերում լրացվում են բոլոր այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնց հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ուղղվել են մասնակիցների հետագա կուտակային վճարները՝ համաձայն Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի,

2) ***«Ֆոնդը, որին դադարել են կատարել կուտակային վճարներ»*** սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում են բոլոր այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնց կուտակային վճարներ այլևս չեն կատարվել՝ հետագա կուտակային վճարները «Ֆոնդը, որին սկսել են կատարել կուտակային վճարներ» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերին ուղղելու նպատակով,

3) ***«Գործարքների թիվը»*** ենթատողերի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն գործարքների թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆոնդի ընտրության դիմումի ներկայացմամբ դադարեցրել են կուտակային վճարները տվյալ ֆոնդին և դրանք ուղղել «Ֆոնդը, որին սկսել են կատարել կուտակային վճարներ» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերին,

4) ***«Ընդհանուր կուտակային վճարները»*** ենթատողերի 3-8-րդ ենթասյունակներում համապատասխան ֆոնդերի համար լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հետագա կուտակային վճարներն այլ կենսաթոշակային ֆոնդերին ուղղելու գործարք կատարած մասնակիցների կուտակային վճարների ընդհանուր մեծությունը, որը հաշվարկվում է, որպես հաշվետու տարվա հունվարի 1-ից մինչև նշված ֆոնդերում կուտակային վճարները դադարեցնելը բոլոր մասնակիցների կատարած կուտակային վճարների հանրագումարը (հազար դրամներով),

5) ***«Ընդամենը»*** սյունակի «գործարքների թիվը» ենթատողերում լրացվում է այն գործարքների ընդհանուր թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆոնդի ընտրության դիմումի ներկայացմամբ հետագա կուտակային վճարներն ուղղել են «Ֆոնդը, որին սկսել են կատարել կուտակային վճարներ» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերին, իսկ «ընդհանուր կուտակային վճարները» ենթատողերի համար լրացվում է ընդհանուր կուտակային վճարների հանրագումարը (հազար դրամներով), որը կատարվել է 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերում մինչև դրանցում կուտակային վճարների կատարումը դադարեցնելը,

6) ***«Ընդամենը»*** տողի «գործարքների թիվը» ենթատողի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն գործարքների ընդհանուր թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆոնդի ընտրության դիմումի ներկայացմամբ դադարեցրել են 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերում կուտակային վճարներ կատարելը և հետագա կուտակային վճարներն ուղղել են 2-7-րդ տողերում նշված ֆոնդերին: Սույն տողի «Ընդհանուր կուտակային վճարները» ենթատողերի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է մասնակիցների կողմից կատարված կուտակային վճարների ընդհանուր մեծության հանրագումարը (հազար դրամներով), որը կատարվել է 3-8-րդ ենթասյունակներում նշված յուրաքանչյուր ֆոնդում:

45. Թիվ 5 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Ֆոնդը, որի փայերը մարվել են»*** սյունակում լրացվում են բոլոր այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնց փայերը փոխանակվել են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ «ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի հետ՝ համաձայն Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի (բացառությամբ այն դեպքերի, երբ մասնակիցները փոխանակման գործարքները կատարել են ծրագրային մոդուլով կատարված ընտրությունը փոխելու համար),

2) ***«Ֆոնդը, որի փայերը թողարկվել են»*** սյունակի 2-7-րդ տողերում լրացվում են բոլոր այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնց փայերի հետ փոխանակվել են «Ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակում նշված ֆոնդի փայերը,

3) ***«Գործարքների թիվը»*** ենթատողերի «Ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն գործարքների թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողին փայերի փոխանակման դիմումի ներկայացմամբ մարել են համապատասխան ֆոնդերի իրենց փայերը,

4) ***«Փոխանակված գումարը»*** ենթատողերի «Ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապատասխան ֆոնդերի միջև փոխանակված գումարների մեծությունները (հազար դրամներով),
5) ***«Ընդամենը»*** սյունակի «գործարքների թիվը» ենթատողերում լրացվում է այն գործարքների ընդհանուր թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փայերի փոխանակման դիմումի ներկայացմամբ «Ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերի իրենց փայերը փոխանակել են «Ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակում նշված տվյալ ֆոնդի փայերի հետ: Սույն սյունակի «փոխանակված գումարը» ենթատողերում լրացվում է «Ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերի փայերի «Ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակում նշված տվյալ ֆոնդի փայերի հետ փոխանակման ընդհանուր գումարը (հազար դրամներով),
6) ***«Ընդամենը»*** տողի «գործարքների թիվը» ենթատողի «Ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն գործարքների ընդհանուր թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապատասխան կենսաթոշակային ֆոնդերի փայերը փոխանակել են «Ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի փայերի հետ: Սույն տողի «փոխանակված գումարը» ենթատողի «Ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է տվյալ ֆոնդի փայերը 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի փայերի հետ փոխանակման գործարքների ընդհանուր մեծությունը (հազար դրամներով):

46. Թիվ 5 հաշվետվության Աղյուսակ 3-ում ներառվում են միայն այն գործարքները, որոնցով մասնակիցները փոխանակել են ծրագրային մոդուլի միջոցով ընտրված ֆոնդերի փայերը կամ դրանց մի մասը, եթե նախքան հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փայերի փոխանակման դիմում ներկայացնելը նրանց կուտակային վճարների կամ փայերի հետ գործարք կատարելու որևէ այլ դիմում չի ներկայացվել մասնակիցների ռեեստրը վարողին: Աղյուսակ 3-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Ֆոնդը, որի փայերը մարվել են»*** սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնցում կատարվել են կուտակային վճարներ նախքան հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ծրագրային մոդուլի միջոցով ընտրված ֆոնդի փայերը «Ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի փայերով փոխանակելը,
2) ***«Ֆոնդը, որի փայերը թողարկվել են»*** սյունակում լրացվում են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնց փայերի հետ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մասնակցի փայերը փոխանակվել են՝ ծրագրային մոդուլի միջոցով ֆոնդի ընտրությունը փոխելու համար,
3) ***«Գործարքների թիվը»*** ենթատողերի «ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն գործարքների թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փոխանակել են ծրագրային մոդուլի միջոցով ընտրված ֆոնդի փայերը «ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակում նշված ֆոնդերի փայերով,
4) ***«Փոխանակված գումարը»*** ենթատողերի «ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապատասխան ֆոնդերի միջև փոխանակված գումարների մեծությունները (հազար դրամներով),
5) ***«Ընդամենը»*** սյունակի «գործարքների թիվը» ենթատողերում լրացվում է այն գործարքների ընդհանուր թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փոխանակել են իրենց փայերը «ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակի 2-7-րդ տողերում նշված տվյալ ֆոնդերի փայերի հետ: Սույն սյունակի «փոխանակված գումարը» ենթատողերում լրացվում է «ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերի փայերը «ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակում նշված տվյալ ֆոնդի փայերի հետ փոխանակման ընդհանուր գումարը (հազար դրամներով),
6) ***«Ընդամենը»*** տողի «գործարքների թիվը» ենթատողի «ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն գործարքների ընդհանուր թիվը, որոնցով մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փոխանակել են 3-8-րդ ենթասյունակներում նշված տվյալ ֆոնդի իրենց փայերը «ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի փայերի հետ: Սույն տողի «փոխանակված գումարը» ենթատողի «ֆոնդը, որի փայերը մարվել են» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է տվյալ ֆոնդի փայերը «ֆոնդը, որի փայերը թողարկվել են» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի փայերի հետ փոխանակման գումարի ընդհանուր մեծությունը (հազար դրամներով):

ԳԼՈՒԽ 12. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

47. Թիվ 6 հաշվետվությունում (ամսական) ներկայացվում են հաշվետու ամսվա ընթացքում կառավարչի՝ իր կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդում Օրենքով սահմանված մասնակցության չափի վերաբերյալ տեղեկությունները: Ընդ որում, մասնակիցների ռեեստրը վարողը սույն հաշվետվության աղյուսակը յուրաքանչյուր կառավարչի համար լրացնում է էքսել ֆայլի առանձին էջում:

48. Թիվ 6 հաշվետվության «Կառավարչի անվանում՝…» դաշտում լրացվում է այն կառավարչի անվանումը, որի կառավարման ներքո գտնվող ֆոնդերում մասնակցության չափի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է տվյալ աղյուսակում: «Ֆոնդի ծածկագրերը» տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գտնվել են տվյալ կառավարչի կառավարման ներքո:

49. Թիվ 6 հաշվետվությունը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Տոկոսային մասնակցություն»*** սյունակում լրացվում է կառավարչի կողմից կենսաթոշակային ֆոնդում 1 տոկոս մասնակցության չափի մեծությունը՝ ըստ ամսվա բոլոր օրերի, տոկոսներով:
2) ***«Դրամական մեծությամբ մասնակցություն»*** սյունակում լրացվում է կառավարչի կողմից կենսաթոշակային ֆոնդում սահմանված դրամական մեծությամբ մասնակցության չափի մեծությունը՝ ըստ ամսվա բոլոր օրերի (հազար դրամներով):

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
2013 թվականի հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված
«Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը» կանոնակարգ 5/08-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՉԵՌՔԲԵՐՎԱԾ ՓԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՓԱՅԵՐԻ

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից

Մինչև _____ թ.

(հազար դրամ)

Կուտակային վճարների վերածումը փայերի	Գումարը
1. Փայերի չվերածված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	
2. Փայերի վերածված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	
3. Փայերի չվերածված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՏԵՐԵՐԸ

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը __/__/_____ թ.

Կենսաթոշակային հաշիվների տերերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Թիվը
1. Ըստ հաշվի բացման հիմքերի	x
1.1. ֆոնդի ընտրության դիմումի ներկայացմամբ	
1.2. հարկային մարմնից ստացված տեղեկատվությամբ	
1.3. ժառանգության տնօրինմամբ	
2. ըստ փայերի տիրապետման	x
2.1. փայեր չունեցող	
2.2. փայեր ունեցող	
2.2.1. մահացած՝ կենսաթոշակային հաշիվների տերերը	
Ընդամենը	

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՖՈՆԴԻ ՓԱՅԱՏԵՐԵՐԸ ԵՎ ՓԱՅԵՐԸ՝ ԸՍՏ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇԻ

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը __/__/_____ թ.

Փայատերերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ ծննդյան տարեթվի և սեռի	Ֆոնդերի ծածկագրերը											
	1		2		3		4		5		6	
	անձանց թիվը	փայերի քանակը	անձանց թիվը	փայերի քանակը	անձանց թիվը	փայերի քանակը	անձանց թիվը	փայերի քանակը	անձանց թիվը	փայերի քանակը	անձանց թիվը	փայերի քանակը
1.1. ծնված մինչև 1951 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.2. ծնված 1952թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.3. ծնված 1953 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.4. ծնված 1954 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.5. ծնված 1955 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.6. ծնված 1956 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.7. ծնված 1957 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												

1.8. ծնված 1958 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.9. ծնված 1959թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.10. ծնված 1960 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.11. ծնված 1961թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.12. ծնված 1962 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.13. ծնված 1963 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.14. ծնված 1964թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.15. ծնված 1965թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.16. ծնված 1966 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.17. ծնված 1967 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.18. ծնված 1968 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.19. ծնված 1969 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.20. ծնված 1970 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.21. ծնված 1971 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.22. ծնված 1972 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.23. ծնված 1973 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.24. ծնված 1974 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.25. ծնված 1975 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
Ընդամենը												

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
2013 թվականի հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված
«Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը
վարողի՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,
դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը» կանոնակարգ 5/08-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՉԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՈՒՄԸ

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից
Մինչև _____ թ.

(հազար դրամ)

Փայերի թողարկումը (մարումը)	**Ֆոնդերի ծածկագրերը**					
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1. Թողարկված փայերի հաշվարկային արժեք						
1.1. Թողարկման վճար						
2. Մարված փայերի հաշվարկային արժեք						
2.1. Մարման վճար						

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՓԱՅԵՐԻ ՉԵՌՔԲԵՐՈՒՄԸ՝ ԸՍՏ ՉԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից
Մինչև _____ թ.

Չեռքբերման գործարքները և ձեռքբերված փայերը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	**Ֆոնդերի ծածկագրերը**											
	1		*2*		*3*		*4*		*5*		*6*	
	գործարքների թիվը	փայերի քանակը	գործարքների թիվը	փայերի քանակը	գործարքների թիվը	փայերի քանակը	գործարքների թիվը	փայերի քանակը	գործարքների թիվը	փայերի քանակը	գործարքների թիվը	փայերի քանակը
1. Կուտակային վճարներով												
1.1. Ծրագրային մոդուլով												
1.2. Ֆոնդի ընտրության դիմումով												
2. Փայերի փոխանակման դիմումով												
3. Երաշխիքային ֆոնդից հատուցմամբ												
4. Կառավարչի փոխհատուցմամբ												
5. Պահառուի փոխհատուցմամբ												
6. Ժառանգության տնօրինմամբ												
Ընդամենը												

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՓԱՅԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ՝ ԸՍՏ ՄԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից
Մինչև _____ թ.

Մարման գործարքները և մարված փայերը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	Ֆոնդերի ծածկագրերը											
	1		2		3		4		5		6	
	Միավոր վճարմամբ	Փայերի քանակ	Միավոր վճարմամբ	Փայերի քանակ	Միավոր վճարմամբ	Փայերի քանակ	Միավոր վճարմամբ	Փայերի քանակ	Միավոր վճարմամբ	Փայերի քանակ	Միավոր վճարմամբ	Փայերի քանակ
1. Փայերի փոխանակմամբ												
2. Անուիտետի պայմանագրով												
3. Ծրագրային վճարով												
4. Միանվագ վճարով												
4.1. Կենսաթոշակային տարիքում												
4.2. Հաշմանդամության հիմքով												
4.3. Վատառողջության հիմքով												
4.4. Ժառանգության հիմքով												
4.5. ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու հիմքով												
4.6. Օտարերկրացիների՝ իրենց մշտական բնակության վայր վերադառնալու հիմքով												
Ընդամենը												

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
2013 թվականի հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված
«Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը
վարողի՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,
դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը» կանոնակարգ 5/08-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ՓԱՅԵՐԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԺԵՔԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(տարեկան)

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՓԱՅԵՐԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԺԵՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը __/__/_____ թ.

(հազար դրամ)

Փայատերերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ փայատերերի ծննդյան տարեթվի և սեռի	փայերի հաշվարկային արժեքների գումարը	անձանց թիվը՝ ըստ ձեռք բերված փայերի հաշվարկային արժեքների համախառն մեծության									
		0-1000	1000-5000	5000-10000	10000-50000	1000-100000	100000-200000	200000-300000	300000-400000	400000-500000	Ավելի քան 500000
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*8*	*10*	*11*	*12*
1.1. ծնված մինչև 1951 թ., այդ թվում՝											
արական սեռի											
իգական սեռի											
1.2. ծնված 1952թ., այդ թվում՝											
արական սեռի											
իգական սեռի											
1.3. ծնված 1953 թ., այդ թվում՝											
արական սեռի											
իգական սեռի											
1.4. ծնված 1954 թ., այդ թվում՝											
արական սեռի											
իգական սեռի											
1.5. ծնված 1955 թ., այդ թվում՝											
արական սեռի											
իգական սեռի											
1.6. ծնված 1956 թ., այդ թվում՝											
արական սեռի											
իգական սեռի											
1.7. ծնված 1957 թ., այդ թվում՝											
արական սեռի											
իգական սեռի											
1.8. ծնված 1958 թ., այդ թվում՝											
արական սեռի											
իգական սեռի											

1.9. ծնված 1959թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.10. ծնված 1960 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.11. ծնված 1961թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.12. ծնված 1962 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.13. ծնված 1963 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.14. ծնված 1964 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.15. ծնված 1965 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.16. ծնված 1966 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.17. ծնված 1967 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.18. ծնված 1968 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.19. ծնված 1969 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.20. ծնված 1970 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.21. ծնված 1971 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.22. ծնված 1972 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.23. ծնված 1973 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.24. ծնված 1974 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
1.25. ծնված 1975 թ., այդ թվում՝												
արական սեռի												
իգական սեռի												
Ընդամենը												

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՄԵԿ ԵՎ ԱՎԵԼԻ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը __/__/_____ թ.

Փայատերերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ փայատերերի ծննդյան տարեթվի և սեռի	**ֆոնդերի թիվը**					
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	1 ֆոնդ	2 ֆոնդ	3 ֆոնդ	4 ֆոնդ	5 ֆոնդ	6 ֆոնդ
1.1. ծնված մինչև 1951 թ., այդ թվում՝						
արական սեռի						
իգական սեռի						
1.2. ծնված 1952թ., այդ թվում՝						
արական սեռի						
իգական սեռի						
